ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

2022

Քահանայարի
Դեպի տրակ

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Երևան 2022

Երաշխավորված է

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի կողմից 2022թ. հունվարի 27–ին

Աշխատանքային խումբ (2015)
Ռուբեն Թոփչյան
Սուսաննա Կարախանյան
Անահիտ Ութմազյան
Անուշավան Մակարյան
Վարդուհի Գյուլազյան

Աշխատանքային խումբ (2021)
Ռուբեն Թոփչյան
Անահիտ Ութմազյան
Վարդուհի Գյուլազյան
Օֆելյա Պետրոսյան
Մերի Բարսեղյան
Գայանե Անանյան

Սույն ձեռնարկում մանրամասն նկարագրված են Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակը, մասնագիտական ուսումնական հաստատությունների և մասնագիտության կրթական ծրագրերի պետական հավատարմագրման նպատակով իրականացվող արտաքին գնահատման գործընթացները, ընթացակարգերը, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների հիմնական պատասխանատուների և շահակիցների դերակատարումները, փորձագետների և ՄՈՒՀ-երի գործունեության շրջանակը: Ձեռնարկը մեթոդական ուղեցույց է մասնագիտական ուսումնական հաստատությունների, փորձագետների և այլ շահակիցների համար:

ՈՎՔԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 7

Ի. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ 9

1. Բարձրագույն մասնագիտական կրթական համակարգ 10

2. Նախնական և միջին մասնագիտական կրթական համակարգ 12

II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ՀՀ-ՈՒՄ 12

1. Որակի ապահովման համատեքստ 14

2. Որակի ապահովման սկզբունքներ և շրջանակ 17

2.1 *Որակի ներքին ապահովում* 18

2.1.1 Որակի մշակույթ 20

2.2 Որակի արտաքին ապահովում 21

2.2.2 Հայաստանյան մոտեցում 24

2.2.3. Պետական հավատարմագրման չափանիշներ 26

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ 27

1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 28

2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 28

3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 29

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 30

5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 31

6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 32

7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 32

8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 33

9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 34
10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 34
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ 35
1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ 36
2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ 36
3. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ 37
4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 37
5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 38
6. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ 38
7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 39
2.3. Որակի արտաքին ապահովման կառույցի ճանաչում 39
2.4 Տեղեկատվության ապահովում 40
2.4.1 Հավատարմագրման պետական գրանցամատյան 40
III. ՈԱԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 41
1. ՈԱԱԿ-ի առաքելությունը և ռազմավարական նպատակները 42
2. Որակի ապահովման ՈԱԱԿ-ի սկզբունքները 44
3. ՈԱԱԿ-ի համագործակցությունը շահակիցների հետ 45
4. ՈԱԱԿ-ի ճանաչումը 49
5. Տեղեկատվության տարածումը ՈԱԱԿ-ի կողմից 50
6. Հավատարմագրման պետական գրանցամատյան 51
IV. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 53
1. Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում 53
2. Դիմում-հայտ պետական հավատարմագրում անցնելու համար 54

2.1 Դիմում-հայտի եւ վերցնելը՝ հավատարմագրման գործընթացի դադարեցումը 55

3. Փորձագիտական խմբի ձևավորումը 56

4. Հավատարմագրման գործընթացի փուլերը 58

4.1 Ինքնավերլուծություն 58

4.2 *Փորձաքննություն* 62

4.2.1 Փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն 64

4.3 Փորձագիտական այց մասնագիտական ուսումնական հաստատություն 66

4.3.1 Նախապատրաստական այց 66

4.3.2 *Փորձագիտական այց* 69

4.3.3 Փորձագիտական այցի ընթացքում հանդիպումների տեսակները 71

4.4 Փորձագիտական զեկույցի պատրաստում 74

4. 5 Փորձագիտական խմբի որոշումների կայացում 78

4.6 Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիր և ժամանակացույց 79

Հավատարմագրման վերաբերյալ որոշման կայացում 81

5.1. ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողով 81

5.2. Հավատարմագրման մասին որոշումներ 83

5.3. Հավատարմագրման մասին որոշման հրապարակում 84

5.4 Գրանցում հավատարմագրման պետական գրանցամատյանում 85

5.5. Հաշվետվություններ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի իրականացման վերաբերյալ 86

5.6. Հավատարմագրված ուսումնական հաստատությունների մշտադիտարկումներ 87

5.7. Հավատարմագրման մերժման և պայմանական հավատարմագրման հետևանքները հաստատության համար 87

5.8. Հավատարմագրման մասին որոշման բողոքարկում 88

5.9. Պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելը 90

V.ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ, ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ 91

1. Փորձագիտական խմբի ձևավորում 93

1.1 Փորձագետներին ներկայացվող պահանջներ 93

1.2. Փորձագետի անձնային հատկանիշներ 96

2. Փորձագիտական խմբի գործառույթները 97

3. Փորձագիտական խմբի պարտականություններ 98

3.1. Փորձագիտական խմբի անդամի պարտականություններ 98

3.2. Փորձագիտական խմբի ղեկավարի պարտականություններ 99

3.3. Համակարգողի պարտականություններ 100

4. Փորձագետների հավաքագրում, ընտրություն և վերապատրաստում 102

5. Փորձագիտական աշխատանքների մշտադիտարկում և գնահատում 105

5.1 Շարունակական գնահատման և մշտադիտարկման եղանակներ 105

6. Շահերի բախում, գաղտնիություն և ազնվություն 107

VI. ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱԽՍԵՐ 108

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 109

ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն ձեռնարկը ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ) բաղկացուցիչ մասն է:

Ձեռնարկը լրամշակվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից 2015 և 2021 թվականներին:

Ձեռնարկում մանրամասն նկարագրված են Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակը, մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՈՒՀ) և մասնագիտության կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) պետական հավատարմագրման նպատակով իրականացվող արտաքին գնահատման գործընթացները, ընթացակարգերը, դրանց տևողությունները, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների հիմնական պատասխանատուների և շահակիցների դերակատարումները, փորձագետների և ՄՈՒՀ-երի գործունեության շրջանակը:

Ձեռնարկի լրամշակման համար ՈԱԱԿ-ը հիմք է ընդունել հետևյալը.

- ՀՀ մասնագիտական կրթության համակարգի կարիքների գնահատումը և իրավիճակի վերլուծությունը, ինչպես նաև առկա զարգացումները,
- ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը, որի միջոցով ձևավորվում է մասնագիտական ուսումնական հաստատությունների վերաբերյալ տվյալների բազան,
- Որակի ապահովման ազգային համակարգի ձևավորման շրջանակում 2009-2021 թվականներին իրականացված հավատարմագրման գործընթացներում կուտակված փորձը և արդյունքները,
- Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի և, հատկապես, Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կենտրոնի հետ համատեղ «Հայաստանում որակի ապահովման տեխնիկական աջակցություն» (ARQATA) ծրագրի շրջանակներում բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացված ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների արդյունքները,
- «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի կողմից 2020 թվականի մայիսի 8-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման

հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգը,

- Բոլոնիայի գործընթացի առաջնահերթություններն ու զարգացումները ,
- Տեղացի և միջազգային փորձագետների կողմից տրված խորհրդատվություններն ու դիտարկումները:

ՈԱԱԿ-ը, գործի դնելով որակի ապահովման իր գործընթացները, ստանալով արձագանքներ տեղացի և միջազգային փորձագետներից, հավատարմագրման գործընթաց անցած ՄՈՒՀ-երի ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբերից և այլ շահակիցներից, ձեռնամուխ եղավ լրամշակել սույն ձեռնարկը: Արտաքին ազդակ է եղել նաև 2015 թ.-ին «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների» (այսուհետ՝ ՈԱԵՉՈՒ) վերանայումը, որը նոր շեշտադրումներ է անում որակի ապահովման պատասխանատուների համար:

Ելնելով նախորդ տարիների կուտակած փորձից՝ ՈԱԱԿ-ը վստահ է, որ իր շահակիցների ակտիվ ներգրավվածությամբ կապահովի սույն ձեռնարկի արդյունավետ կիրառությունը, ինչը կնպաստի ՈԱԱԿ-ի առաքելության իրականացմանն ու ՀՀ մասնագիտական կրթության որակի հավաստմանը, և հետագայում կհանգեցնի որակավորումների ճանաչելիությանը ազգային և միջազգային մակարդակներում:

ՈԱԱԿ-ը շնորհակալություն է հայտնում կրթական համակարգի բոլոր շահակիցներին, ովքեր ձգտում են հայկական կրթական համակարգը ճանաչելի և մրցունակ դարձնել ազգային և միջազգային մակարդակներում:

ՈԱԱԿ-ը շնորհակալություն է հայտնում նաև փաստաթղթի վերամշակման և լրամշակման գործընթացի բոլոր մասնակիցներին:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում որակի ապահովման բոլոր միջազգային կառույցներին և փորձագետներին, ովքեր մասնակցել են տարբեր հարցումների ու քննարկումների և իրենց դիտարկումներն են ներկայացրել ձեռնարկում տեղ գտած դրույթների վերաբերյալ:

Ձեռնարկի կամ նրանում նկարագրված գործընթացների վերաբերյալ բոլոր հարցերը կարող են ուղղվել ՈԱԱԿ-ի գրասենյակ.

էլ-փոստ՝ info@anqa.am,
հեռախոս՝(+374-10) 229145,
(+374-10) 229146,
(+374-10) 229147,
ֆաքս՝ (+374-10) 229148:

Ի. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ

Բարձրագույն կրթության շարունակական բարեփոխումներն ուղղված են Բոլոնիայի գործընթացի և դրանից բխող Կոմյունիկեների սկզբունքների և արժեքների իրականացմանը: 2005թ. ստորագրելով Բոլոնիայի գործընթացի անդամ երկրների կրթության նախարարների Բերգենի կոմյունիկեն և պաշտոնապես միանալով Բոլոնիայի գործընթացին՝ Հայաստանը ստանձնել է պատասխանատվություն իրականացնել Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքներն ըստ գործողությունների առանձին ուղղությունների՝ կազմելով Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (այսուհետ՝ ԵԲԿՏ) մաս: ԵԲԿՏ-ին ինտեգրումը ենթադրում է իրականացնել բեկումնային և շարունակական փոփոխություններ ՀՀ բարձրագույն կրթական համակարգում դեպի գիտելիքահենք և նորարարական կրթություն: 2005 թ.-ից ի վեր ՀՀ բարձրագույն կրթական համակարգում տեղի են ունեցել արմատական փոփոխություններ, մասնավորապես՝ ներդրվել է համադրելի որակավորումների եռաստիճան համակարգ, կատարվել է անցում ուսուցման կազմակերպման կրեդիտային համակարգին՝ միաժամանակ իրականացվում են կրթական ծրագրերի արմատական վերափոխումներ՝ անցնելով ուսանողակենտրոն ուսուցմանը և խթանելով ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունությունը: 2011 թ. ապրիլի 8-ին հաստատվել է Որակավորումների ազգային շրջանակը (այսուհետ՝ ՈԱՇ): Այնուհետև վերջինս շարադրվել է նոր խմբագրությամբ՝ 2016 թվականի ՀՀ կառավարության թիվ 714-Ն որոշմամբ:

Մասնագիտական ուսումնական հաստատություններն այժմ իրականացնում են իրենց գործունեությունը՝ հիմք ընդունելով որակի ապահովման նոր մոտեցումները: Ընթացող բարեփոխումներում հատկապես կարևորվում են ուսանողության դերի և ազդեցության բարձրացման, մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթական և գիտական գործընթացների միահյուսման խնդիրները, նորարարական մոտեցումների կիրառումը ուսուցման գործընթացում, տվյալահեն որոշումների կայացումը: Համակարգային այս փոխկապակցված

փոփոխությունները հնարավորություն են տալիս Հայաստանին լիարժեք ինտեգրվելու ԵԲԿՏ-ին:

Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում նույնպես իրականացվում են մի շարք բարեփոխումներ, որոնք միտված են ոլորտի բարելավման և միջազգային պահանջներին համահունչ գործընթացների իրականացմանը:

1. Բարձրագույն մասնագիտական կրթական համակարգ

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն մասնագիտական կրթությունն իրականացվում է հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերով: Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերն իրականացվում են երկաստիճան համակարգով՝ բակալավր և մագիստրոս, իսկ հետբուհական կրթական ծրագիրը՝ միաստիճան համակարգով՝ հետազոտող և կլինիկական օրդինատոր: Բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթական ծրագրերը համապատասխանում են ՈԱՇ-ի 6-8-րդ մակարդակներին: Բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերն իրականացվում են պետական, ոչ պետական, միջպետական, պետության մասնակցությամբ բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով:

Համաձայն ՀՀ բարձրագույն կրթական համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին ՀՀ կառավարության 2005 թվականի թիվ 2307-Ն որոշման՝ բուհերում ուսանողի տարեկան լրիվ ուսումնական բեռնվածությունը հավասար է 60 ակադեմիական կրեդիտի: Բարձրագույն կրթության բակալավրի որակավորման (առաջին աստիճան) համար սահմանված է առնվազն 240 կրեդիտ (չորս տարի տևողությամբ առկա ուսուցում), ոստիկանական մասնագիտությունների համար՝ առնվազն 180 կրեդիտ (առնվազն երեք տարի), բժշկական մասնագիտությունների դեպքում՝ 300 կրեդիտ (հինգ տարի): Մագիստրոսի աստիճան ստանալու համար սահմանվում է 60-120 կրեդիտ, բժշկական մասնագիտությունների համար՝ մինչև 180 կրեդիտ: Հեռակա ուսուցման դեպքում ուսման տևողությունը մեկ տարով ավելանում է:

Կրեդիտը ներառում է՝

- մասնակցությունը դասախոսություններին, լաբորատոր և գործնական պարապմունքներին, պրակտիկաներին,
- քննությունների և ստուգարքների հանձնումը,
- անհատական պարապմունքների ցուցանիշը,
- ռեֆերատների, կուրսային, դիպլոմային և ուսումնական պլանով նախատեսված այլ աշխատանքների կատարման աստիճանի, որակի գնահատումը:

Բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնելու համար ուսումնական հաստատությունները և նրանց ծրագրերը ենթակա են լիցենզավորման: Լիցենզավորմանը հաջորդում է բուհերի ինստիտուցիոնալ և ծրագրային պետական հավատարմագրումը: Ծրագրային հավատարմագրումը կամավոր է՝ ի տարբերություն ինստիտուցիոնալ հավատարմագրման (ՀՀ կառավարության 2011 թվականի թիվ 978-Ն որոշում):

Բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վարձի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը՝ ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի թիվ 163-Ն «Ըստ կրթական աստիճանների և հավատարմագրման արդյունքների՝ ուսման վարձի առավելագույն ուսման չափը» որոշման համաձայն:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթների իրականացմամբ: Բուհի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ռեկտորը:

2. Նախնական և միջին մասնագիտական կրթական համակարգ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության նպատակը նախնական մասնագիտական (արհեստագործական) որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է: Միջին մասնագիտական կրթության նպատակը առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է: Արհեստագործական և միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է արհեստագործական և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրով՝ արհեստավորի և մասնագետի որակավորման շնորհմամբ: Ուսման տևողությունը կազմում է 6 ամսից 3 տարի՝արհեստավորի դեպքում, և 2-5 տարի՝ մասնագետի դեպքում:

Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ՄՄՈՒՀ): ՄՄՈՒՀ-երում ուսուցումն իրագործվում է հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքի վրա՝ ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման ձևերով:

Միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքում հաստատվել է միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների նոր ցանկը:

II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ՀՀ-ՈՒՄ

Մասնագիտական կրթության որակի ապահովման ներքին և արտաքին համակարգեր ստեղծելու և ամրապնդելու պահանջն աճել է ամբողջ աշխարհում, քանի որ վերջին քսանամյակում շեշտակի աճել են մասնագիտական ուսումնական հաստատությունների և ուսանողների թիվը և դրանց հատկացվող հանրային ու մասնավոր ներդրումները: Բոլոնիայի հռչակագիրն ստորագրած բոլոր երկրների կրթության նախարարներն ընդգծել են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում հավատարմագրման կամ որակի ապահովման համակարգեր ներդնելու

անհրաժեշտությունը («Բեռլինի կոմյունիկե», 2003 թ.): Բոլոնիայի հռչակագիրն ստորագրած բոլոր երկրներում որակի արտաքին ապահովումը պարտադիր գործընթաց է: Եվրոպայի գրեթե բոլոր երկրներն արձագանքել են այս պայմանին՝ հիմնելով և կիրառելով կրթական ծառայությունների որակը բարելավող և արդյունքները հավաստող համակարգեր: Ուշադրության կենտրոնում է ՄՈՒՀ-երի գործունեության և հատկապես որակավորումների շնորհման որակի ապահովումը և դրա մասին տեղեկության տրամադրումը հանրությանը:

«Բեռլինի կոմյունիկեն» կոչ էր անում «Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիային» իր բոլոր գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ մշակել որակի ապահովման չափորոշիչների, ընթացակարգերի և ուղենիշների համաձայնեցված մի փաթեթ, որն ավելի տրամաբանական կդարձներ որակի ապահովման համակարգը Եվրոպայում և դրանով կնպաստեր ակադեմիական և մասնագիտական շարժունությանը: Արդյունքում՝ Բոլոնիայի հռչակագիրն ստորագրած երկրների կրթության նախարարները 2005 թ.-ին («Բերգենի կոմյունիկե») սահմանեցին և ընդունեցին «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներն ու ուղենիշները» (այսուհետ՝ՈԱԵՉՈՒ), որոնք որակի ապահովման գործընթացների շարունակական բարեփոխումների արդյունքում փոփոխության ենթարկվեցին 2015թ.-ին:

ՈԱԵՉՈՒ-ն կառավարությունների, որակի ապահովման գործակալությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար ապահովում է որակի ապահովման ազգային համակարգեր մշակելու օժանդակություն: ՈԱԵՉՈՒ-ն տրամադրում է միասնական կողմնորոշիչ շրջանակ, որն ուղղված է շնորհվող որակավորումների միջազգային ճանաչմանը:

Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներն ու ուղենիշներն իրենց «զրոյական փուլում» խթանեցին ազգային կրթական համակարգերի զարգացումը: Գլոբալացումը, կրթության մասսայականացումը և միջազգայնացումը, որին հաջորդում է ուսանողների աճող շարժունությունը, մասնագիտական կրթության համակարգի զարգացման վերջին տարիների

հիմնական միտումներն են:

Միջազգայնացման միտումները բնորոշ հատկանիշներ են նաև որակի ապահովման և հավատարմագրման գործակալությունների համար. ձևավորվել են ազգային և հավատարմագրման համաեվրոպական բազմաթիվ կառույցներ, փոփոխվել են որակի գնահատման տեխնոլոգիաները և ընթացակարգերը, որոնք կիրառվում են ազգային հավատարմագրման գործակալությունների կողմից:

ԵԲԿՏ-ում տեղի ունեցած այս փոփոխությունները հիմք հանդիսացան «երկրորդ սերնդի» Որակի ապահովման եվրոպական չափորոշիչների ու ուղենիշների մշակման համար, որոնք քննարկվեցին և ընդունվեցին Բոլոնիայի հռչակագիրն ստորագրած երկրների կրթության նախարարների Երևանյան վեհաժողովում 2015 թ. մայիսին:

Հայաստանի Հանրապետության որդեգրած քաղաքականությունը, կիրառվող ընթացակարգերը և մեխանիզմները մշակված են Որակի ապահովման եվրոպական չափանիշներին և ուղենիշներին համապատասխան՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները:

2018 թ.-ին ընդունված Փարիզի կոմյունիկեով խրախուսվում է ակադեմիական ազատությունը և բարեվարքությունը, բուհերի ինստիտուցիոնալ ինքանավարությունը, ուսանողների և շահակիցների մասնակցությունը բարձրագույն կրթության կառավարման գործընթացին, նորարարությունը ուսումնառության և դասավանդման գործընթացում:

2020 թ.-ին ընդունված Հռոմի կոմյունիկեով կարևորվում է կրթության ներառականությունը յուրաքանչյուր սովորողի համար, ինչպես նաև ուսումնառության մեթոդներում նորարարությունը, որը սերտորեն կապված է հետազոտության և պրակտիկայի հետ՝ ներառելով կրթական բարեփոխումների, գիտելիքների փոխանցման, շարժունության փոխկապակցվածությունը:

1. Որակի ապահովման համատեքստ

ՀՀ կրթական համակարգում ընդունված է կրթության որակի այն սահմանումը, որը բնութագրում է որակը «որպես համապատասխանություն

հայտարարված նպատակներին»: Այս մոտեցման համաձայն՝ որակի արտաքին գնահատման գործընթացներում որոշվում է, թե որքանով են հաստատության տրամադրած կրթական ծառայությունները կամ ուսանողի ձեռք բերած կրթության արդյունքները համապատասխանում սահմանված նպատակներին: Նման սահմանումը խթանում է հաստատություններին իրենց առաքելության մեջ ներկայացնել հստակ նպատակներ, որոնց հասնելու աստիճանով է գնահատվելու և ներկայացվելու որակը: Որակի արտաքին գնահատում իրականացնող կառույցը հատուկ ուշադրություն է դարձնում ուսումնական հաստատության սահմանած նպատակների համապատասխանությանը ՀՀ կառավարության կողմից հաստատված որակի ապահովման չափանիշներին ու ոլորտի զարգացման գերակա ուղղություններին, ինչպես նաև հասարակության պահանջներին: Այս մոտեցումը ենթադրում է, որ առաջին հերթին պետք է սահմանվեն մասնագիտական կրթության նպատակները և խնդիրները, իսկ կրթության արդյունքները և ծառայությունները պետք է բավարարեն շահակիցների կարիքները և պահանջները: Այն նաև ենթադրում է, որ շահակիցները պետք է հստակ ձևակերպեն իրենց կարիքներն ու պահանջները:

Մասնագիտական կրթության նպատակները հատատության առաքելության մեջ ներկայացվում են ընդհանրական տեսքով և մասնավորեցվում ակադեմիական մակարդակում՝ մասնագիտության կրթական ծրագրի նպատակների և ակնկալվող ուսումնառության արդյունքների մեջ:

Ուսումնական հաստատությունը ներկայացնում է, թե ինչպես է իրականացնում իր առաքելությունը և արտաքին գնահատողին հիմնավորում է իրականացման արդյունավետությունը, իսկ արտաքին գնահատողները հավաստում են արդյունքները երրորդ կողմին՝ շահակիցներին:

Մասնագիտական կրթության որակը սերտ կապված է կրթական ծրագրերի իրականացման՝ դասավանդման արդյունավետության և գործունակության հետ: Գործունակությունը կապված է կրթական ծրագրերի նպատակների, իսկ արդյունավետությունը՝ խնդիրների իրականացման համար կիրառվող ռեսուրսների հետ: Նպատակների

համապատասխանությունը գնահատելիս որակի արտաքին ապահովման կառույցը հատուկ ուշադրություն է դարձնում նպատակների համապատասխանությանը ՈԱՇ-ին, պետական կրթական չափորոշիչներին ու գերակա ուղղություններին, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջներին: Վերլուծվում է նաև, թե որքանով են նպատակներն իրականացվել, և ինչ չափով է երաշխավորված գործընթացների շարունակականությունը: Մասնագիտական կրթության որակի հավաստումը որակի ապահովման և շարունակական բարելավման գործընթաց է մասնագիտական կրթությունն ուսանողների, շահակիցների և ամբողջ հասարակության կարիքներին համապատասխանեցնելու համար: Որակի ապահովումը հետապնդում է երկու հիմնական նպատակ՝ **հաշվետվողականություն և բարելավում**:

Այդ նպատակների իրականացումը նպաստում է ուսումնական հաստատության գործունեության նկատմամբ վստահության ձևավորմանը:

Այսպիսով, ուսումնական հաստատությունը պլանավորում է իր անելիքները, իրականացնում դրանք, այնուհետև հիմնավորում է դրանց արդյունավետությունը: Արտաքին գնահատողները՝ ի դեմս գործընկեր-փորձագետների, հավաստում են արդյունքներն երրորդ կողմին՝ շահակիցներին, և խորհրդատվություններով նպաստում են հաստատության գործունության բարելավմանը:

Հայաստանում մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգը ներառում է գործողությունների երկու մակարդակ.

- **«Քաղաքական» մակարդակ**. այս մակարդակում կրթության ոլորտի շահակիցները մասնակցում են հավատարմագրման պետական չափանիշների և ընթացակարգերի մշակման և պարբերական վերանայման գործընթացներին, ինչպես նաև հետագա քննարկումներին՝ այդ չափանիշները մեկնաբանելու համար: Հայաստանի դեպքում այս քննարկումների համակարգողը որակի ապահովման անկախ կառույցն է՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը, որը ծառայում է որպես կենտրոնական «հարթակ» ՀՀ մասնագիտական կրթության շահակիցների շփման համար:

- **«Ընթացակարգային» մակարդակ.** այս մակարդակում պետք է երաշխավորվի որակի արտաքին ապահովման կառույցի լիարժեք անկախությունը հավատարմագրման յուրաքանչյուր գործընթացում: Եթե Կառավարությունը կամ որևէ այլ շահագրգիռ կողմ անհրաժեշտ է համարում փոփոխություններ կատարել հավատարմագրման կարգի կամ չափանիշների մեջ, ապա դա կարելի է անել միայն որակի ապահովման շրջանակի քաղաքական մակարդակում: Չափանիշները կամ ընթացակարգերը կարող են փոխվել տեղի ունեցող հավատարմագրման գործընթացների ընթացքում: Սակայն, որպես կանոն, այդ փոփոխությունները չեն կարող հետադարձ ազդեցություն ունենալ գործընթացում արդեն իսկ գտնվող ուսումնական հաստատության վրա, եթե իրավական ակտով այլ բան սահմանված չէ:

ՀՀ-ում կրթության որակի ապահովումը պարտադիր գործընթաց է բոլոր ՄՈՒՀ-երի համար՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից: **Որակի ապահովումը** կազմակերպության գործունեությունը բարելավելու և զարգացնելու պաշտոնապես ընդունված համակարգ է **ՈԱՇ-ին, պետական կրթական չափորոշիչներին և հավատարմագրման չափանիշներին համապատասխանության նպատակով:**

Հիմնական գործընթացները ձևակերպված են Որակի ապահովման ՀՀ շրջանակի սահմաններում և հիմնված են ՈԱԵՉՈՒ-ի վրա:

2. Որակի ապահովման սկզբունքներ և շրջանակ

Մասնագիտական կրթության որակի ապահովման ՀՀ շրջանակը հիմնված է ԵԲԿՏ-ում որակի ապահովման հետևյալ չորս սկզբունքների վրա.

- մասնագիտական ուսումնական հաստատություններն են կրում հիմնական պատասխանատվությունն իրենց տրամադրած կրթության որակի և նրա ապահովման համար,

- որակի ապահովումն արձագանքում է բարձրագույն կրթության համակարգերի, ուսումնական հաստատությունների, կրթական ծրագրերի և ուսանողների բազմազանությանը,
- որակի ապահովումն աջակցում է որակի մշակույթի ձևավորմանը,
- որակի ապահովումը հաշվի է առնում ուսանողների, բոլոր այլ շահակիցների և հանրության կարիքներն ու սպասելիքները:

Հայաստանում մասնագիտական կրթության համար մշակված որակի ապահովման ամբողջական շրջանակն ընդգրկում է չորս տարբեր գործընթացներ.

- ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովում,
- ՄՈՒՀ-երի որակի արտաքին ապահովում,
- որակի արտաքին ապահովման կառույցի ճանաչում միջազգային կազմակերպությունների կողմից,
- կրթության ոլորտում տրամադրվող ծառայությունների որակի վերաբերյալ տեղեկատվության ապահովում:

2.1 *Որակի ներքին ապահովում*

ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովումը Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի հիմնական տարրերից է: Որակի ներքին ապահովման գործընթացները պետք է ուսումնական հաստատության գործունեության մաս կազմեն, ինչպես նաև պետք է ստեղծեն նախադրյալներ նրա գործունեությունը բարելավելու և զարգացնելու համար:

Առաջնային կարևորություն ունի ուսումնական հաստատության որակի ներքին ապահովման քաղաքականությունը, որը պետք է արտացոլի որակի ներքին ապահովման համակարգի հիմնական մեխանիզմները և նպաստի հաստատության հաշվետվողականությանը: Այն կօգնի նաև որակի մշակույթի ձևավորմանն ու ամրապնդմանը՝ նպաստելով արտաքին և ներքին շահակիցների լիարժեք մասնակցությանը որակյալ կրթության ապահովման գործում:

Քաղաքականությունը հիմնված է **որակի շարունակական բարելավման սկզբունքի** վրա: Որակի շարունակական բարելավումն ընդգրկում է չորս

հիմնական գործողություն, որոնք ձևավորում են որակի շարունակական բարելավման շարժիչ սկզբունքը՝ պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում.

- **պլանավորում՝** խնդիրների սահմանում, հնարավոր լուծումների ձևակերպում,
- **իրականացում՝** սահմանված պլանի հիման վրա միջոցառումների իրականացում,
- **գնահատում՝** իրականացված գործողությունների ընթացիկ գնահատում,
- **բարելավում՝** արդյունքների ամփոփում և հետագա քայլերի վերանայում:

Այս սկզբունքի կիրառման միջոցով ՄՈՒՀ-ն իր շահակիցներին հավաստում է, որ հնարավորինս բարձր արդյունքների է հասել իր գործունեության բոլոր ոլորտներում:

Հաշվետվողականության համատեքստում որակի ներքին ապահովումը կիրառվում է որպես մշտադիտարկումներ կատարելու մեխանիզմ: Ուսանողները, շրջանավարտները, գործատուները և հասարակությունն ուսումնական հաստատություններից ակնկալում են կրթական ծառայությունների նպատակների իրականացում:

Որակի ապահովումը կարևորագույն գործիք է ՄՈՒՀ-ի գործունեության համար, որը երաշխավորում է հասարակության պահանջների և կարիքների բավարարումը: ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը և թափանցիկությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է որակի ներքին ապահովման ռազմավարության և գործընթացների արտաքին գնահատում:

Հավատարմագրման չափանիշներով սահմանված մակարդակին հասնելու համար ՄՈՒՀ-ի գործունեության բոլոր ոլորտներում և գործառույթներում պահանջվում է տեղեկատվական հոսքերի հստակեցում և ընթացակարգերի թափանցիկություն: ՄՈՒՀ-ի առաքելությունը և գործունեությունը կանոնակարգող բոլոր համապատասխան փաստաթղթերը պետք է լինեն հրապարակված և հասանելի դասախոսների, ուսանողների ու բոլոր շահակիցների համար:

Ուսումնական հաստատության համար կարևոր խնդիր է նաև ապահովել մասնագիտության կրթական ծրագրերի որակը:

ՄՈՒՀ-երը պետք է ունենան կրթական ծրագրերի մշակման, հաստատման և մշտադիտարկման գործընթացներ: Կրթական ծրագրերը պետք է համահունչ լինեն ամբողջ հաստատության առաքելությանը և ունենան ուսումնառության սահմանված վերջնարդյունքներ: Կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում կարևոր է բոլոր շահակիցների ներգրավվածությունը: Կրթական ծրագրի իրականացման կիզակետում ՄՈՒՀ-երը պետք է դիտարկեն ուսանողի ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ուսանողակենտրոն մոտեցումը հատկապես կարևոր է ուսանողների մոտիվացիայի բարձրացման, ինչպես նաև ուսումնական գործընթացում նրանց ակտիվ ներգրավման տեսանկյունից: Բարձրորակ կրթություն ապահովելու գործում հատկապես կարևոր է դասախոսի դերը: Հետևապես ուսումնական հաստատությունները պետք է ունենան դասախոսական կազմի համալրման և մասնագիտական զարգացման թափանցիկ մեխանիզմներ:

Մեծ կարևորություն է տրվում նաև ուսանողների ընդունելության, առաջընթացի, որակավորման շնորհման և ճանաչման գործընթացներին և դրանք կանոնակարգող փաստաթղթերին: Կարևոր է, որ գործող կանոնակարգերը համապատասխանեն հաստատության առաքելությանը և նպատակներին:

2.1.1 Որակի մշակույթ

Որակի ներքին ապահովման գործընթացները պետք է ուղղված լինեն և աջակցեն ուսումնական հաստատությունում որակի մշակույթի ձևավորմանը, զարգացմանը և տարածմանը:

Որակի մշակույթ ունեցող կազմակերպություններում ծառայություն մատուցող և ծառայությունից օգտվող յուրաքանչյուր անձ պատասխանատու է մյուսների համար՝ փոխհամագործակցելով նրանց հետ: Որակի մշակույթը ոչ միայն որակի ապահովման համար պատասխանատուների, այլև կազմակերպության բոլոր աշխատակիցների պատասխանատվությունն է:

Այնուամենայնիվ, յուրաքանչյուր ստորաբաժանում անմիջական պատասխանատվություն է կրում իր կատարած աշխատանքի որակի համար:

Կարևորվում է, որ ցանկացած գործ առաջին իսկ անգամից կատարվի պատշաճ կերպով: Եթե դա չի հաջողվում, ապա վերլուծվում է այն գործընթացը, որի արդյունքը գոհացնող չէ, որպեսզի արվեն շտկումներ՝ խնդրի կրկնություն թույլ չտալու համար:

Որակի մշակույթի առկայության դեպքում գործընթացի յուրաքանչյուր փուլում գնահատվում է արդյունավետությունը և հետադարձ կապ է ապահովվում, ինչի շնորհիվ վերջնարդյունքի ստուգման հատուկ անհրաժեշտություն չի առաջանում: Միայն վերջնարդյունքն ստուգելով՝ դժվար է բացահայտել, թե որ օղակում է տեղի ունեցել խնդիրը, հետևաբար դժվար է մշակել բարելավման քայլերը:

Ուսումնական հաստատությունը, որտեղ որակի ապահովման գործընթացները միտված են որակի մշակույթի ձևավորմանը, կարող է բոլոր մակարդակներում ցուցադրել.

- թափանցիկ և ակտիվ գործունեություն, սրտացավ վերաբերմունք որակի նկատմամբ,
- քննադատական ինքնավերլուծություն իրականացնելու պատրաստակամություն,
- ներքին կանոնակարգեր՝ հստակ ընթացակարգերով և դրանց հետևողական իրականացմամբ,
- հանրամատչելի և հստակ սահմանված պատասխանատվություններ որակի վերահսկման և գնահատման համար,
- արտաքին և ներքին շահակիցներից կարծիք ստանալու ձգտում,
- լավագույն փորձի բացահայտման և տարածման ձգտում,
- խնդիրների լուծման համար տեղեկատվության վրա հիմնված տեղին և համապատասխան գործողությունների ձեռնարկում:

2.2 Որակի արտաքին ապահովում

Որակի արտաքին ապահովման գործընթացներն ունեն երեք հիմնական նպատակ.

- **Հաշվետվողականություն և թափանցիկություն.** որակի ապահովման գործընթացները երաշխավորում են, որ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և պետական կրթական չափորոշիչների ապահովման դեպքում հասարակության շահերը պաշտպանված են, ինչպես նաև հրապարակային են դարձնում առանձին ՄՈՒՀ-երի կրթական ծառայությունների որակը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:
- **Վերահսկում.** հաստատությունը ոչ միայն վերահսկում է ռեսուրսների ծախսը, այլև ցույց է տալիս, թե ինչպես է հասնում հնարավորինս բարձր որակի՝ առկա ռեսուրսներն արդյունավետ օգտագործելով:
- **Որակի բարելավում.** հաստատությունը քննարկումներ և վերլուծություններ է ձեռնարկում որակի ապահովման գործընթացների արդյունավետության, որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացման նպատակով:

Ընդհանուր առմամբ, որակի արտաքին ապահովման նպատակն է հավաստել, որ ՄՈՒՀ-երը հետամուտ են հետևյալ հարցերի պատասխաններին.

- արդյո՞ք ՄՈՒՀ-ն ունի որակի մշակույթ ձևավորող ընթացակարգեր, որոնք կիրառվում են հաստատության բոլոր օղակներում և կրթական բոլոր ծրագրերի իրականացման ընթացքում,
- արդյո՞ք ՄՈՒՀ-ը պարբերաբար մշտադիտարկում է որակական նպատակներին հասնելու իր առաջընթացը, մասնավորապես, կրթական ծառայությունների որակի ապահովումն ու հետագա բարելավումը,
- արդյո՞ք որակի ապահովման ընթացակարգերի տվյալներն օգտագործվում են կրթական և վերապատրաստման ծառայությունների որակը բարձրացնելու և ուսանողների կարիքներին համապատասխանեցնելու նպատակով,
- արդյո՞ք ՄՈՒՀ-ը մշտադիտարկում է ուսանողներին տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը,

- արդյո՞ք ձեռնարկվում են որակի ապահովման գործընթացում հայտնաբերված բացթողումների վերացման համապատասխան գործողություններ,
- արդյո՞ք շահակիցներին տրամադրվում է հաստատության և մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն:

Որակի ապահովման ընթացակարգերի մշակման, իրագործման և վերանայման ընթացքում կարևոր է չսահմանափակվել միայն հեշտ չափելի քանակական տվյալներով, քանի որ դա կարող է ուշադրությունը շեղել որակի ապահովման գործընթացի այլ կարևոր ասպեկտներից, որոնք չափվում են որակական գնահատման մոտեցումների միջոցով:

2.2.1 Որակի արտաքին ապահովման մեխանիզմներ

Եվրոպական Բարձրագույն Կրթական Տարածքում կիրառվում են որակի արտաքին գնահատման և ապահովման տարբեր մեխանիզմներ՝ արտաքին աուդիտ, սերտիֆիկացում, գնահատում, հավատարմագրում և այլն:

Աուդիտ. իրականացվում է հաստատության նախաձեռնությամբ՝ արտաքին փորձագետների ներգրավմամբ: Աուդիտը մասնագիտական ուսումնական հաստատությունում ընթացակարգերի, գործընթացների և մեխանիզմների գնահատումն է: Աուդիտի դեպքում գնահատվում է ոչ թե բուն համապատասխանությունը նպատակներին, այլ որակի ապահովման ընթացակարգերն ու մեխանիզմները, առաքելության ու նպատակների իրականացման գործընթացները:

Սերտիֆիկացում. գործընթաց է, որով հավաստող մարմինը պաշտոնապես ճանաչում է համապատասխանությունը նախապես սահմանված որակի պահանջներին և սովորաբար որոշ առավելություններ է շնորհում հաստատությանը: Հիմնականում այս գործընթացն իրականացվում է կամավորության սկզբունքով:

Գնահատում. առհասարակ կիրառվում է ծրագրային մակարդակում: Այն գործընթաց է, որով հաստատվում է, որ մասնագիտական ուսումնական հաստատությունում գործող կամ նոր մշակված կրթական ծրագիրը

համապատասխան որակի է, բավարարում է ներկայացվող պահանջները, և դրա իրականացումը կարող է շարունակվել կամ սկսվել:

Հավատարմագրում. իրականացվում է պետության կողմից լիազորված կառույցի կողմից: Հավատարմագրումը գործընթաց է, որով արտաքին կառույցը գնահատում է մասնագիտական ուսումնական հաստատության կամ կոնկրետ մասնագիտության կրթական ծրագրի որակը՝ որոշակի նախանշված նվազագույն չափանիշներին կամ չափորոշիչներին դրանց համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու նպատակով:

2.2.2 Հայաստանյան մոտեցում

Հայաստանում կրթության որակի արտաքին ապահովումն իրականացվում է պետական հավատարմագրման միջոցով:

Հավատարմագրման գործընթացը ՀՀ-ում իրականացնում է պետության կողմից լիազորված «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը:

Որակի արտաքին ապահովումը ՀՀ-ում իրականացվում է հաստատության որակի ներքին ապահովման գործընթացներին համահունչ՝ պահպանելով հաստատության ինքնավարությունը:

Բացի այդ, որակի արտաքին ապահովումը հիմնված է հաստատության որակի ներքին ապահովման համակարգի կողմից վեր հանված տեղեկատվության վրա:

Մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովումը ՀՀ-ում իրականացվում է պետական հավատարմագրման հետևյալ երկու գործընթացներով.

1. ինստիտուցիոնալ հավատարմագրում,
2. մասնագիտության կրթական ծրագրի հավատարմագրում (Ծրագրային հավատարմագրում):

Ինստիտուցիոնալ հավատարմագրում. պետության կողմից ուսումնական հաստատության կրթական և որակի ապահովման գործընթացների, մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ օրենքով սահմանված ուսումնական հաստատության տեսակին ներկայացվող

պահանջներին, պետական կրթական չափորոշիչներին և ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշներին համապատասխանության ճանաչումն է: Այն պարբերաբար իրականացվող պարտադիր գործընթաց է ՀՀ տարածքում գործող մասնագիտական բոլոր ուսումնական հաստատությունների համար՝ անկախ ենթակայությունից և կազմակերպաիրավական ձևից: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը թույլ է տալիս գնահատել ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև տեսնել, թե արդյոք հաստատությունն իրականացնում է իր առաքելությունը, հետապնդում է շարունակական բարելավման քաղաքականություն և նպաստում է իրականացվող կրթական ծրագրերի զարգացմանը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը նախապայման է ծրագրային հավատարմագրման համար:

Մասնագիտության կրթական ծրագրի (Ծրագրային) հավատարմագրում. ծրագրային հավատարմագրումը պետության կողմից մասնագիտության կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին և ծրագրային հավատարմագրման չափանիշներին համապատասխանության ճանաչումն է: Ծրագրային հավատարմագրման թիրախն առանձին մասնագիտության կրթական ծրագիրն է: Այս գործընթացը թույլ է տալիս պարբերաբար գնահատել մասնագիտության կրթական ծրագրի արդյունավետությունը, ինչպես նաև ստուգել, թե արդյոք այն ապահովում է ուսանողների կողմից ուսումնառության արդյունքների ձեռքբերումն ակնկալվող ամբողջ ծավալով: Ծրագրային հավատարմագրումն իրականացվում է ՄՈՒՀ-ի նախաձեռնությամբ, կամավորության սկզբունքով՝ բացառությամբ բժշկական մասնագիտությունների կրթական ծրագրերի, որոնք պետք է պարտադիր անցնեն ծրագրային հավատարմագրում:

Հավատարմագրման գործընթացների արդյունքում ուսումնական հաստատությանը կամ մասնագիտության կրթական ծրագրին տրվում է հավատարմագրվածի կարգավիճակ. ինստիտուցիոնալ հավատարմագրման դեպքում՝ 2, 4 կամ 6 տարի ժամկետով, իսկ ծրագրային հավատարմագրման

դեպքում՝ 1 կամ 5 տարի ժամկետով, կամ հավատարմագրում տալը մերժվում է:

Հավատարմագրման գործընթացը ներառում է 3 փուլ.

ա. Ինքնավերլուծություն՝ հաստատության կամ կրթական ծրագրի ինքնավերլուծության գործընթաց, որի արդյունքում պատրաստվում է զեկույց՝ հիմնված ՀՀ կառավարության կողմից սահմանված չափանիշների վրա:

բ. Փորձաքննություն՝ անկախ փորձագետների խմբի կողմից ինքնավերլուծության և կից ներկայացված հիմնավորող փաստաթղթերի, էլեկտրոնային հարցաշարի ուսումնասիրություն և այց ուսումնական հաստատություն: Այցի ժամանակ տեղի են ունենում հանդիպումներ վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ուսանողության ներկայացուցիչների, շրջանավարտների, գործատուների և այլ շահակիցների հետ: Արդյունքում պատրաստվում է փորձագիտական զեկույց, որը ներառում է գնահատական, ինչպես նաև խորհրդատվություններ բարելավման վերաբերյալ:

գ. Որոշման կայացում՝ հավատարմագրման հանձնաժողովի կողմից փաստերի ուսումնասիրություն, որոշման կայացում և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների մատնանշում:

2.2.3. Պետական հավատարմագրման չափանիշներ

Պետական հավատարմագրման չափանիշները հիմք են ծառայում ուսումնական հաստատությունների կողմից իրենց գործունեության և մասնագիտությունների կրթական ծրագրերի ինքնավերլուծությունն իրականացնելու համար, ինչպես նաև հնարավորություն են ստեղծում բացահայտելու ՄՈՒՀ-ում առկա բարելավման կարիք ունեցող ոլորտները:

Չափանիշները ձևակերպված են միջազգային նորմերին համապատասխան, ապահովում են բազմաձևություն և նորարարության բավարար ազատություն՝ ելնելով տարբեր հաստատությունների բնույթի, որդեգրած կրթական հայեցակարգերի և նպատակների միջև առկա էական տարբերություններից: Միաժամանակ, չափանիշները բավարար հստակ են սահմանված և հավաստում են, որ չափանիշների ձևակերպումներում առկա են

ընդունելի որակի կարևոր տարրերը, դրանք անցել են նախնական գնահատում և կիրառելի են: Հավատարմագրվածի կարգավիճակ ձեռք բերելու համար հաստատությունները և կրթական ծրագրերը գնահատվում են սահմանված բոլոր չափանիշներով:

Չափանիշները հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք չափելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչները ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և սահմանում են անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները:

ՀՀ կառավարության կողմից սահմանված հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները պարբերաբար կարող են վերանայվել՝ երաշխավորելու դրանց արդիականությունը, հավաստիությունը և համապատասխանությունը որակի ապահովման ոլորտում առկա վերջին միտումներին ու զարգացումներին:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Մասնագիտական ուսումնական հաստատություններն ինքնավերլուծություն իրականացնելիս, իսկ արտաքին փորձագետները՝ գնահատելիս, ելնում են այն ընդհանուր սկզբունքից, որ ուսումնական հաստատությունում կառավարման գործընթացները պետք է միտված լինեն կրթական, հետազոտական և հասարակությանը մատուցվող ծառայությունների շարունակական բարելավմանը և հետապնդեն հետևյալ նպատակները.

1) ձևավորել և զարգացնել որակի մշակույթ,
2) ձևավորել կազմակերպական մշակույթ, որը կնպաստի շրջանավարտների մոտ փոխանցելի գիտելիքների և հմտությունների ձևավորմանը՝ հարափոփոխ միջավայրին համապատասխան,

3) բարձրացնել մասնագիտական ուսումնական հաստատության գործունեության արդյունավետությունը և աջակցել հաստատության հաշվետվողականությանը,

4) նպաստել որակավորման աստիճանների համադրելիությանը, մրցունակությանը և մատուցվող ծառայությունների թափանցիկությանը ազգային և միջազգային մակարդակներում:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշները և չափորոշիչներն են.

1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:***

ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին,

բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները,

գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:***

ա. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ,

բ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը,

գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ,

դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա,

ե. քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում),

զ. ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ,

է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:***

ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների,

բ. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը,

գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը,

դ. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը,

ե. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:***

ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ,

բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր,

գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար,

դ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց,

ե. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ,

զ. ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում,

է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին,

ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:***

ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր,

բ. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ,

գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերական գնահատման համար,

դ. պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն

իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ,

ե. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը,

զ. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր,

է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:***

ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն,

բ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները,

գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով,

դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը,

ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների***

արդյունավետ իրականացման համար:

ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր,
բ. ՄՈՒՀ-ը իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար,
գ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն,
դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը,
ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ,
զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին,
է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:***

ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ,
բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը,

գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ,
դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:***

ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր,
բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց,
գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ,
դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:***

ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր,
բ. որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ,

գ. ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում,

դ. որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է,

ե. որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար,

զ. որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Մասնագիտության կրթական ծրագիրը պետք է շարունակաբար բարելավվի և հետապնդի հետևյալ նպատակները.

1) ձևավորել ուսումնառության մշակույթ, որը կնպաստի շրջանավարտների մոտ փոխանցելի գիտելիքների և հմտությունների ձևավորմանը՝ հարափոփոխ միջավայրին համապատասխան,
2) բարձրացնել կրթական ծրագրի արդյունավետությունը և հասարակության հանդեպ հաշվետվողականությունը,
3) նպաստել համադրելիությանը և մրցակցությանը, ինչպես նաև որակավորումների ճանաչմանը ազգային և միջազգային մակարդակներում:

Ծրագրային հավատարմագրման չափանիշները և չափորոշիչներն են.

1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***Մասնագիտության կրթական ծրագիրը (այսուհետ՝ ՄԿԾ) համապատասխանում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի, որակավորման բնութագրի և պետական կրթական չափորոշչի պահանջներին, ինչպես նաև ՄՈՒՀ-ի առաքելությանը:***

ա. ՄԿԾ-ի նպատակները և խնդիրները համահունչ են ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին,

բ. ՄԿԾ-ն հանդիսանում է ՄՈՒՀ-ի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս,

գ. ՄԿԾ-ն մանրամասն նկարագրված է ըստ շնորհվող որակավորման ուսումնառության ակնկալվող արդյունքների,

դ. ՄԿԾ-ն համապատասխանում է ՈԱՇ-ին, մասնագիտական կրթության որակավորումների բնութագրին և մասնագիտության պետական կրթական չափորոշչին,

ե. ՄԿԾ-ն բովանդակային առումով հստակ մշակված է և համահունչ նմանատիպ այլ ճանաչված մասնագիտության կրթական ծրագրի հետ և նպաստում է ուսանողների ու դասախոսական կազմի շարժունությանը և միջազգայնացմանը,

զ. ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները,

է. առկա են հստակ ընթացակարգեր ու մեխանիզմներ, որոնք ապահովում են ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման իրականացումը:

2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ. ***ՄԿԾ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմով՝ ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար:***

ա. ՄԿԾ-ի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող հստակ պահանջներ և դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր,

բ. ՄԿԾ-ի շրջանակներում սահմանվել են դասախոսական կազմի պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն ու ընթացակարգեր, որոնք նպաստում են դասախոսների մասնագիտական կարիքների վերհանմանը և զարգացմանը,

գ. ՄԿԾ-ն նպաստում է դասախոսական կազմի կայացմանը և մասնագիտական առաջընթացին,

դ. հիմնական դասախոսական կազմն ապահովում է ՄԿԾ-ի կայուն իրականացումը:

3. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***ՄԿԾ-ի շրջանակում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդներն ապահովում են ուսանողների մոտ ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը:***

ա. ՄԿԾ-ի շրջանակում հստակ սահմանված են դասավանդման և ուսումնառության մոտեցումները, մեթոդները, որոնք անհրաժեշտ են ուսումնառության ակնկալվող արդյունքները ձևավորելու համար,

բ. ՄԿԾ-ն իրականացվում է՝ հաշվի առնելով միջազգային մակարդակում կիրառվող դասավանդման առաջավոր փորձը և մոտեցումները,

գ. առկա են դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմներ:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***ՄԿԾ-ն ունի ակադեմիական ազնվությանը նպաստող գնահատման համակարգ, ինչը թույլ է տալիս հավաստել ուսանողի առաջընթացը և ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը և ձեռքբերումը:***

ա. ՄԿԾ-ի շրջանակներում կիրառվում է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը գնահատող հստակ և հուսալի համակարգ, որի չափանիշները հասանելի են դասախոսներին և ուսանողներին,

բ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են որակավորումների շնորհման նպատակով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը հավաստող հստակ մեխանիզմներ,

գ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են գնահատման համակարգի բարելավման հստակ մեխանիզմներ,

դ. ՄԿԾ-ի շրջանակներում հավասար և անաչառ մոտեցում է ցուցաբերվում ուսանողներին հստակ սահմանած քաղաքականության և ընթացակարգերի միջոցով՝ հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները,

ե. ՄԿԾ-ի շրջանակներում խրախուսվում է ուսանողի ուսումնագիտական ինքնուրույնությունը և պայքարը գրագողության դեմ:

5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***ՄԿԾ-ի շրջանակում ապահովվում է կապը հետազոտական ու ստեղծագործական գործունեության և ուսումնառության միջև:***

ա. ՄԿԾ-ի շրջանակում առկա են երկարաժամկետ ռազմավարություն, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները,

բ. ՄԿԾ-ն հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին,

գ. ՄԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը,

դ. ՄԿԾ-ի շրջանակում առկա են հետազոտական ու ստեղծագործական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու և բարելավելու հստակ մեխանիզմներ:

6. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***ՄԿԾ-ն նպաստում է որակյալ կրթություն իրականացնելուն՝ ձևավորելով ուսումնառության համար բարենպաստ միջավայր:***

ա. ՄԿԾ-ի իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը,

բ. ուսանողներին տրամադրվում են ծրագրի սահմաններում ուսումնառությանը նպաստող օգտակար ու մատչելի տեղեկատվություն և խորհրդատվություն,

գ. ՄԿԾ-ն ապահովված է իր բովանդակությանը համապատասխան ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայով:

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ. ***ՄԿԾ-ի շրջանակում առկա է որակի ներքին համակարգ, որն ապահովում է ՄԿԾ-ի որակի կայունությունը և շարունակական զարգացումը:***

ա. Որակի ապահովման ներքին համակարգը մշակված է և գործում է հասարակության կարիքներին և ուսանողների պահանջներին հետևելու, ինչպես նաև իր գործունեությունը գնահատելու համար,

բ. ՄԿԾ-ի շրջանակում առկա են որակի ներքին ապահովման արդյունավետ քաղաքականություն և ընթացակարգ (ընթացակարգեր),

գ. ՄԿԾ-ի շրջանակում հետադարձ կապի մեխանիզմներով հավաքագրվում է իրականացվող գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի նպատակների և գործընթացների բարելավման համար,

դ. ՄԿԾ-ի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացներում,

ե. ՄԿԾ-ի շրջանակում իրականացվում է օրինակելի փորձի տարածում:

2.3. Որակի արտաքին ապահովման կառույցի ճանաչում

ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից տրամադրվող կրթական ծառայությունների, ծրագրերի որակի և շնորհվող որակավորումների միջազգային մակարդակում ճանաչումն ապահովելու համար որակի արտաքին ապահովում իրականացնող կառույցն իր գործունեությունը պետք է կազմակերպի ՈԱԵՉՈ-ի (Բաժին 3. Չափորոշիչներ

և ուղենիշներ որակի արտաքին ապահովման գործակալությունների համար) պահանջներին համապատասխան:

Կառույցը պետք է կանոնավոր իրականացնի որակի արտաքին ապահովման գործընթացներ՝ որպես իր առաքելության, հիմնական նպատակների և խնդիրների իրականացում, ունենա պաշտոնական կարգավիճակ, գործի ինքնուրույն և անկախ: Կառույցը պետք է ունենա որակի ներքին ապահովման ընթացակարգեր՝ ապահովելու իր գործունեության թափանցիկությունը և բարելավումը, ինչպես նաև հաշվետվողականությունը շահակիցների առջև: Որակի արտաքին ապահովման կառույցը պետք է պարբերաբար անցնի արտաքին գնահատում՝ ցուցադրելու իր գործունեության համապատասխանությունը ՈԱԵՉՈՒ-ին:

2.4 Տեղեկատվության ապահովում

ՈԱԵՉՈՒ-ի համաձայն՝ որակի արտաքին ապահովման կառույցը պետք է պարբերաբար տեղեկատվություն տարածի իր գործունեության արդյունքների, վերլուծությունների և կրթական համակարգի զարգացումների վերաբերյալ:

Հայաստանում մասնագիտական կրթության վերաբերյալ տեղեկատվությունը պետք է դառնա հանրությանը հասանելի: Դա միտված է կրթական ծառայությունների թափանցիկությանը:

2.4.1 Հավատարմագրման պետական գրանցամատյան

Որակի արտաքին ապահովման կառույցի իրականացրած հավատարմագրման գործընթացների արդյունքները հանրությանը և միջազգային կազմակերպություններին հասանելի դարձնելու նպատակով հավատարմագրման կարգի համաձայն ներդրվել է «Հավատարմագրման պետական գրանցամատյան»-ը: Հավատարմագրման պետական գրանցամատյանը ուղղակի կապված է Արտաքին գնահատման փորձագիտական զեկույցների եվրոպական բազային (DEQAR): Սա ենթադրում է, որ հավատարմագրման գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը ուղղակի հասանելի է դառնում նաև միջազգային հարթակում:

Հավատարմագրման պետական գրանցամատյանը պարունակում է տեղեկատվություն ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունների և հավատարմագրված մասնագիտության կրթական ծրագրերի մասին:

Հավատարմագրման պետական գրանցամատյանը վարում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը:

III. ՈԱԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը հիմնադրվել է ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1486-Ն որոշմամբ: ՈԱԱԿ-ի նպատակն է աջակցել մասնագիտական ուսումնական հաստատություններին ձևավորել, տարածել և ամրապնդել կրթության որակի ապահովման մշակույթ՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները և մոտեցումները:

ՄՈՒՀ-երի պատասխանատվությունն է ապահովել կրթական ծառայությունների որակը և որակավորումների շնորհման արժանահավատությունը, ուստի ՄՈՒՀ-երի խնդիրն է ստեղծել որակի ներքին ապահովման այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն մատուցվող կրթության որակի համապատասխանությունը ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին: Այդ չափանիշներն ընդգրկում են ազգային պահանջները և մի շարք միջազգային փաստաթղթերով սահմանված երաշխավորություններ.

- «Եվրամիության 1998 թ. սեպտեմբերի 24-ի՝ Բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում եվրոպական համագործակցության վերաբերյալ հանձնարարական» (98/561/EC),
- «Եվրոպական բարձրագույն կրթության տարածք», Եվրոպայի կրթության նախարարների՝ Բոլոնիայում 1999 թ. հունիսի 19-ին գումարված համաժողովի համատեղ հռչակագիր («Բոլոնիայի

հռչակագիր»),

- «Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում Որակի ապահովման չափորոշիչներ և ուղենիշներ» (2015 թ.):

Բոլոր ՄՈՒՀ-երը՝ անկախ իրենց ենթակայությունից և կազմակերպաիրավական ձևից, պետք է առաջնորդվեն ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ մասնագիտական կրթության պետական հավատարմագրման չափանիշներով (հաստատված ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30 թիվ 959-Ն որոշմամբ) և մասնակցեն հավատարմագրման գործընթացներին:

1. ՈԱԱԿ-ի առաքելությունը և ռազմավարական նպատակները

ՈԱԱԿ-ի առաքելություն է խթանել որակի շարունակական բարելավումը մասնագիտական կրթական համակարգում՝ նպաստելով ինքնավարությանը և հաշվետվողականությանը:

Իր գործունեությունն իրականացնելիս ՈԱԱԿ-ը նույնպես առաջնորդվում է ինքնավարության և անկախության սկզբունքներով:

ՈԱԱԿ-ը նպաստում է մասնագիտական կրթության ոլորտում հանրության վստահության ձևավորմանը, նորարարությանը, հավասարությանը, հաշվետվողականությանը և փոխգործակցությանը՝ կրթական ծառայությունների որակի պարբերական բարելավման միջոցով:

ՈԱԱԿ-ն իր առաքելությանը հասնում է ռազմավարական հետևյալ նպատակների միջոցով.

Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում.

- Վերապատրաստումներով և որակի արտաքին գնահատման գործընթացներով նպաստել ուսուցման որակի բարելավանը ՀՀ բոլոր ՄՈՒՀ-երում:
- Հավաքագրել և տարածել մասնագիտական կրթական համակարգի մասին վստահելի տեղեկատվություն՝ ապահովելով փորձագիտական գնահատումների և ընթացիկ հավատարմագրումների հավաստիությունը:

- Խթանել մասնագիտական ոլորտում լավագույն փորձի տարածումը և խրախուսել մասնագիտական կրթության նորարարությունը:

ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում.

- Փորձագետների հավաքագրման քաղաքականության իրականացմամբ խթանել բոլոր ոլորտների մասնագետների փորձագիտական կարողությունների զարգացումը՝ համագործակցելով ոլորտային ՄՈՒՀ-երի և գործատուների հետ:
- Շարունակական վերապատրաստումների միջոցով հարստացնել ՈԱԱԿ-ի փորձագետների բազան՝ թիրախավորելով մասնագիտական կրթության բոլոր մակարդակները:
- Ընդլայնել ուսանող-փորձագետների պատրաստման շրջանակը՝ նպաստելով որակի արտաքին և ներքին գործընթացների մասին բավարար իրազեկվածությանը:

Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն.

- Շարունակական նախաձեռնողական հաղորդակցության միջոցով մեծացնել շահակիցների հետ կապերը՝ ներառյալ գործատուներ, ուսանողներ, դասախոսներ և ոլորտի փորձագետներ՝ խթանելու նրանց ներգրավվածությունը կրթության որակի բարելավման գործընթացներում:

Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում.

- Տեղական և միջազգային օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունների և թեմատիկ վերլուծությունների արդյունքում գործող իրավակարգավորումների համահնչեցում ՀՀ օրենսդրությանը և միջազգային պահանջներին:
- Ապահովել հիմանական դերակատարում ՀՀ Որակի ապահովման շրջանակի մշակման և իրականացման մեջ՝ համահունչ լինելով գործող և մշակվող իրավակարգավորումներին:

Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում.

- Մասնագիտական կրթության որակի ապահովման միջազգային կառույցներին անդամակցության և օտարերկրյա գործակալությունների հետ համագործակցությունը խորացնելու և լավագույն փորձի միջոցով ամրապնդել միջազգային գործընկերությունը:
- Հաշվի առնելով հայկական սփյուռքի ներուժը՝ նպաստել առաջատար ՄՈՒՀ-երում կրթություն ստացած մարդկանց փորձի փոխանցմանը:

ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները.

- Ուժեղացնել կազմակերպության որակի ներքին ապահովման համակարգի կարողությունները:
- Ապահովել հավատարմագրման գործընթացն իրականացնող մասնագետների և աշխատակազմի կարողությունների շարունակական զարգացում:
- Ամրապնդել ֆինանսական կայունությունը:

ՈԱԱԿ-ն ամրագրում է, որ որակի ապահովման համակարգի ներդրումն ու պահպանումը ՄՈՒՀ-երի առաջնահերթ պարտավորությունն ու պատասխանատվությունն է: Չունենալով որակի ապահովման համակիրառելի համակարգ՝ յուրաքանչյուր ՄՈՒՀ, հիմք ընդունելով ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները և մասնագիտության պետական կրթական չափորոշիչները, եվրոպական ուղենիշներն ու չափորոշիչները, պետք է ինքը մշակի որակի ներքին ապահովման իր համակարգը:

2. Որակի ապահովման ՈԱԱԿ-ի սկզբունքները

ՈԱԱԿ-ը ձգտում է ապահովել հանրության վստահությունը մասնագիտական ուսումնական հաստատությունների հանդեպ՝ ղեկավարվելով հետևյալ սկզբունքներով.

- ՈԱԱԿ-ի մատուցած ծառայությունները պետք է լինեն հասկանալի, թափանցիկ, պատշաճ կազմակերպված և ֆինանսապես արդյունավետ,

- ՈԱԱԿ-ն իր գործունեության համար հաշվետու է հանրությանը,
- ՈԱԱԿ-ի չափանիշները պետք է հստակ համապատասխանեն որակի ապահովման նպատակին և պարզ ու հասկանալի լինեն հանրությանը,
- ՈԱԱԿ-ի մատուցած ծառայությունները պետք է լինեն վավեր, հուսալի և գործնական, իսկ որոշումների կայացումը պետք է կատարվի՝ ըստ սահմանված չափանիշների,
- ՈԱԱԿ-ը պատասխանատվություն է կրում մասնագիտական կրթության որակի գնահատման գործընթացների հավաստիության համար, իսկ ՄՈՒՀ-ը՝ կրթության որակի համար,
- ՈԱԱԿ-ի ծառայությունները պետք է հասանելի լինեն բոլոր մասնագիտական ուսումնական հաստատություններին,
- ՈԱԱԿ-ի ծառայությունները միտված են պաշտպանելու ուսանողներին կրթական ցածրորակ ծառայություններից ու արդյունքներից և չպետք է բացասաբար անդրադառնան նրանց վրա:

Քաղաքականության և ընթացակարգերի բարելավման վերաբերյալ քննարկումների ու առաջարկությունների համար ՈԱԱԿ-ը որդեգրել է բաց և թափանցիկ գործելաոճ: ՈԱԱԿ-ի շահակիցները կարող են ակտիվ մասնակցել գործընթացներին:

3. ՈԱԱԿ-ի համագործակցությունը շահակիցների հետ

ՈԱԱԿ-ի քաղաքականությունը ենթադրում է շահակիցների հետ համագործակցության երկու մակարդակ՝ շահակիցների կարիքների պարբերական ուսումնասիրություն և կարիքների բավարարմանն ուղղված գործողություններ: Շահակիցների կարիքներին ավելի նպատակային ծառայելու համար ՈԱԱԿ-ն առանձնացրել է իր շահակիցների խմբերը և սահմանել է համագործակցության մակարդակը:

Շահակիցներ	Համագործակցություն
Կառավարություն	ՈԱԱԿ-ը համագործակցում է ՀՀ Կառավարության հետ որակի ապահովման շրջանակի զարգացման հարցում:
ՀՀ ԿԳՄՍՆ	ՈԱԱԿ-ն ակտիվ համագործակցում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտը կառավարող լիազոր մարմնի հետ մասնագիտական կրթության շարունակական բարելավման ուղղությամբ՝ մասնակցելով քաղաքականությունների, օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մշակման և վերանայման աշխատանքներին:
ՄՈՒՀ-երի ռեկտորներ և տնօրեններ	ՈԱԱԿ-ը պարբերաբար կոնֆերանսներ և աշխատաժողովներ է կազմակերպում պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների ռեկտորների և տնօրենների մասնակցությամբ՝ որակի

	ապահովման համակարգի առջև ծառացած խնդիրների համատեղ քննարկման, ինչպես նաև որակի մշակույթի կայացման և զարգացման նպատակով:
Մասնագիտական ուսումնական հաստատություններ	ՄՈՒՀ-երի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն աջակցելու նպատակով ՈԱԱԿ-ը համագործակցում է ուսումնական հաստատությունների և նրանց որակի ապահովման կառույցների հետ:
Մասնագիտական միություններ	ՈԱԱԿ-ը շարունակում է ձեռնարկել մի շարք գործողություններ՝ որակի ապահովման գործընթացում գործատուների միությունների, ինչպես նաև անհատ ձեռներեցների ներգրավվածությունն ակտիվացնելու համար: ՈԱԱԿ-ը շարունակում է քայլեր ձեռնարկել՝ մասնագիտական միություններին կրթության որակի ապահովման

	գործընթացում ավելի ակտիվ ներգրավելու ուղղությամբ:
Ուսանողներ	ՈԱԱԿ-ը համագործակցում է ուսանողների հետ տարբեր մակարդակներում (ուսանողական միություններ, ուսանողական ցանցեր, անհատ ուսանողներ): Ուսանողների հետ համագործակցության համար ՈԱԱԿ-ի կողմից կիրառվող մեխանիզմը «Ուսանողության ձայն» նախագիծն է, որի միջոցով ուսումնասիրվում են դասավանդման և ուսումնառության հետ կապված խնդիրների վերաբերյալ ուսանողների մոտեցումները, ինչպես նաև ուսանողները վերապատրաստումներ են անցնում ՈԱԱԿ-ում, իսկ հաջողություն գրանցածները՝ որպես ուսանող-փորձագետներ ներգրավվում են հավատարմագրման գործընթացների նպատակով ձևավորված փորձագիտական խմբերում:

Պրոֆեսորադասախոսական կազմ	ՈԱԱԿ-ն ուղղակիորեն համագործակցում է պրոֆեսորադասախոսական կազմի հետ իր կողմից պարբերաբար կազմակերպվող հանդիպումների, կոնֆերանսների, աշխատաժողովների, վեբինարների և վերապատրաստումների շրջանակներում:
Վարչական աշխատակազմ	ՈԱԱԿ-ը համագործակցում է նաև ՄՈՒՀ-երի վարչական աշխատակիցների հետ իր կողմից պարբերաբար կազմակերպվող հանդիպումների և աշխատաժողովների շրջանակներում:

ՈԱԱԿ-ը ձգտում է բարելավել որակի ապահովման իր ընթացակարգերը՝ կազմակերպելով խորհրդակցություններ և քննարկումներ բոլոր շահակիցների հետ:

4. ՈԱԱԿ-ի ճանաչումը

ՈԱԱԿ-ի կողմից մատուցվող որակի ապահովման ծառայությունների՝ միջազգային մակարդակում պատշաճությունն ու ճանաչումը երաշխավորելու

համար ՈԱԱԿ-ը միջազգային գործակալությունների կողմից պարբերաբար ենթարկվում է արտաքին փորձաքննության՝ ըստ ՈԱԵՁՈ-ի:

2009 թ.-ից սկսած՝ ՈԱԱԿ-ը Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) նախնական անդամ է: 2011 թ. դարձել է Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (INQAAHE) լիիրավ անդամ:

2016 թ. Բարձրագույն Կրթության Որակի Ապահովման Եվրոպական Ասոցիացիային (ENQA) լիիրավ անդամակցելու նպատակով ՈԱԱԿ-ն անցել է արտաքին գնահատում: 2017 թ. ՈԱԱԿ-ը դարձել է լիիրավ անդամ՝ 5 տարի ժամկետով:

Փորձագիտական այցից հետո ՈԱԱԿ-ը մշակել է բարելավման պլան՝ հիմնվելով փորձագետների կողմից տրամադրված զեկույցի վրա:

2017 թ. ՈԱԱԿ-ը նաև ներառվել է Բարձրագույն կրթության եվրոպական ռեգիստրում (EQAR):

Ըստ ՈԱԱԿ-ի ռազմավարական ծրագրի, արտաքին գնահատումը և ճանաչումը կրում են շրջափուլային բնույթ, որը ենթադրում է, որ գործակալությունը պարբերաբար պետք է անցնի արտաքին գնահատում:

5. Տեղեկատվության տարածումը ՈԱԱԿ-ի կողմից

ՈԱԱԿ-ը ՄՈՒՀ-երի որակի ապահովման արդյունավետությունը դիտարկում է շրջափուլային եղանակով: Նման դիտարկումների արդյունքները հասանելի են հանրությանը: Դրանց հրապարակումը կարևոր է հանրության վստահությունը ձեռք բերելու համար: Այս գործընթացում ՈԱԱԿ-ն ակնկալում է բոլոր շահակիցների մասնակցությունը:

Իրականացված հավատարմագրման արդյունքները հանրությանը և միջազգային կազմակերպություններին հասանելի դարձնելու նպատակով ստեղծված «Հավատարմագրման պետական գրանցամատյանը» վարում է ՈԱԱԿ-ը: Այն տեղադրված է կենտրոնի կայքէջում, որը կատարելագործվել է և միացել Արտաքին գնահատման փորձագիտական զեկույցների եվրոպական բազային (DEQAR):

ՈԱԱԿ-ն իր պաշտոնական կայքէջում հրապարակում է ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման արդյունքների վերաբերյալ հավատարմագրման հանձնաժողովի որոշումները:

ՈԱԱԿ-ը հրապարակում է նաև պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումները: Հավատարմագրման պետական գրանցամատյանում հրապարակվում են ՄՈՒՀ-երի հավատարմագրման գործընթացների վերաբերյալ հրապարակման ենթակա բոլոր փաստաթղթերը:

Բացի այդ, ՈԱԱԿ-ը երեք տարին մեկ պարբերականությամբ իրականացնում է կրթական համակարգի վերլուծություններ, ինչպես նաև այլ ոլորտային վերլուծություններ, որոնց արդյունքները ներկայացվում են են կրթության որակին նվիրված տարբեր համաժողովներում և հրապարակվում ՈԱԱԿ-ի պաշտոնական կայք-էջում:

6. Հավատարմագրման պետական գրանցամատյան

Իրականացված հավատարմագրման գործընթացների արդյունքները հանրությանը և միջազգային կազմակերպություններին հասանելի դարձնելու նպատակով՝ հավատարմագրման կարգին համապատասխան՝ ՈԱԱԿ-ն ստեղծել է «Հավատարմագրման պետական գրանցամատյան»:

Ըստ կարգի՝ ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կարողությունները կամ մասնագիտության կրթական ծրագիրը համարվում են հավատարմագրված՝ հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Գրանցամատյանը բաղկացած է երկու բաժնից՝

1) հավատարմագրված ուսումնական հաստատություններ (ինստիտուցիոնալ հավատարմագրում),
2) հավատարմագրված մասնագիտությունների կրթական ծրագրեր (ծրագրային հավատարմագրում):

«Հավատարմագրված ուսումնական հաստատություններ» բաժնում գրանցվում է տեղեկատվություն ինստիտուցիոնալ հավատարմագրում

ստացած ՄՈՒՀ-ի մասին՝ ուսումնական հաստատության անվանումը, իրավաբանական և գործունեության հասցեն, հավատարմագրումն իրականացրած կազմակերպության անվանումը և երկիրը, Հավատարմագրման հանձնաժողովի կայացրած որոշման համարը և ամսաթիվը, հավատարմագրման վկայականի սերիան, համարը և տրման ամսաթիվը, վավերականության ժամկետը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հավատարմագրման վկայականի հաստատման հրամանի համարը:

«Հավատարմագրված մասնագիտությունների կրթական ծրագրեր» բաժնում գրանցվում է հետևյալ տեղեկատվությունը հավատարմագրված կրթական ծրագրի մասին՝ մասնագիտության կրթական ծրագրի անվանումը և դասիչը, ուսումնական հաստատությունը, հավատարմագրումն իրականացրած կազմակերպության անվանումը և երկիրը, Հանձնաժողովի կայացրած որոշման համարը, հավատարմագրման վկայականի ներդիրի սերիան, համարը և տրման ամսաթիվը, վավերականության ժամկետը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հավատարմագրման վկայականի հաստատման հրամանի համարը:

IV. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1. Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում

Ինստիտուցիոնալ պետական հավատարմագրման հիմնական նպատակն է հավաստել մասնագիտական ուսումնական հաստատություններին, ուսանողներին, նրանց ծնողներին, գործատուներին և շահագրգիռ հասարակությանը, որ մասնագիտական կրթության որակը ճանաչելի է պետության կողմից: Հավատարմագրումը պետության կողմից ՄՈՒՀ-ի, կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչումն է, որը հանգեցնում է մատուցվող կրթական ծառայությունների որակի նկատմամբ մասնագիտական կրթության շահակիցների և հասարակության վստահության ձևավորմանը: Հավատարմագրում շնորհվում է որոշակի ժամկետով՝ հավաստելով, որ ուսումնական հաստատությունները կամ կրթական ծրագրերն ունեն անհրաժեշտ կարողություն տվյալ ժամանակահատվածում երաշխավորված որակով կրթական գործունեություն իրականացնելու համար: Հավատարմագրումը ենթադրում է, որ հաստատությունը պահպանում է այն չափանիշները, որոնք հնարավորություն են տալիս շրջանավարտներին ձեռք բերել անհրաժեշտ որակավորում՝ մասնագիտական ոլորտում առաջընթաց ունենալու կամ կրթությունն այլ ուսումնական հաստատություններում շարունակելու համար:

Այս առումով կարևոր սկզբունք է հավատարմագրման մասին որոշում կայացնող կառույցի անկախությունը: ՈԱԱԿ-ի խնդիրն է հավատարմագրման մասին որոշման կայացման գործընթացն ապահովագրել առանձին մասնակիցների ազդեցությունից: Ավելին, հավատարմագրման գործընթացի թափանցիկությունը, համադրելիությունը, ինչպես նաև օրենսդրական հիմքերն անհրաժեշտ գործոններ են մասնագիտական կրթության ոլորտի հանդեպ հասարակության վստահության ձևավորման համար:

2. Դիմում-հայտ պետական հավատարմագրում անցնելու համար

Հավատարմագրման գործընթաց անցնելու համար ուսումնական հաստատությունը կարող է դիմել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամին կամ Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR) գրանցված, ինչպես նաև Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններին: Եվրոպական բարձրագույն կրթական տարածքից դուրս երկրների հետ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները կամ ՀՀ տարածքում գործող այդ երկրների մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնաճյուղերը կարող են հավատարմագրվել այլ ճանաչված կառույցների կողմից, որոնց ցանկը հաստատում է ՀՀ ԿԳՄՍ նախարարը: Միջազգային հավատարմագրման դիմած ուսումնական հաստատությունը հինգ օրացուցային օրվա ընթացքում պետք է ՈԱԱԿ-ին տեղեկացնի օտարերկրյա կազմակերպությունների կողմից հավատարմագրման գործընթացի մեկնարկի մասին:

ՈԱԱԿ-ը հավատարմագրման դիմում-հայտերն ընդունում է ամբողջ տարվա ընթացքում: Դիմում-հայտերը ներկայացվում են ըստ ՈԱԱԿ-ի կողմից մշակված և Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված համապատասխան ձևաչափերի:

Հավատարմագրման գործընթացի կազմակերպչական և տեխնիկական հարցերի կարգավորման, ինչպես նաև ՈԱԱԿ-ի հետ համագործակցելու համար ուսումնական հաստատությունը նշանակում է գործընթացի համար պատասխանատու անձ (այսուհետ՝ Պատասխանատու անձ): Պատասխանատու անձի անունը, ազգանունը և կապ հաստատելու տվյալները նշվում են դիմում-հայտում:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման համար դիմող մասնագիտական ուսումնական հաստատությունները դիմում-հայտում պարտադիր ներկայացնում են այն երկու մասնագիտության կրթական ծրագրերը, որոնց վերլուծությունը ներկայացվելու է ինքնավերլուծության մեջ:

Դիմում-հայտի ընդունման կամ մերժման ընթացակարգը սահմանվում է Հավատարմագրման կարգով:

ՈԱԱԿ-ը, Հավատարմագրման կարգի 7-րդ և 14-րդ կետերի համաձայն, կայացնում է որոշում դիմում-հայտն ընդունելու կամ մերժելու մասին: Դիմում-հայտը կարող է մերժվել, եթե.

1) հաստատությունը չունի կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա,
2) չի լրացրել ՈԱԱԿ-ի էլեկտրոնային համապատասխան հարցաշարը,
3) ծրագրային հավատարմագրման է դիմել՝ չունենալով ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Ներկայացվող պահանջներին համապատասխանելու դեպքում ՈԱԱԿ-ը կայացնում է որոշում դիմում-հայտն ընդունելու մասին:

Դիմում-հայտի ընդունումից հետո մեկ շաբաթվա ընթացքում կազմվում և հաստատության հետ համաձայնեցվում են գործընթացի ժամանակացույցը և նախահաշիվը՝ ըստ ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհրդի հաստատած սակագների: ՄՈՒՀ-ի ու ՈԱԱԿ-ի միջև կնքվում է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր:

Պայմանագրում պարտադիր ամրագրվում են.

1) գործընթացի սկիզբը և ավարտը,
2) վերլուծության ենթակա 3 կրթական ծրագրերը. երկուսը՝ հաստատության ընտրությամբ, երրորդը՝ ՈԱԱԿ-ի ընտրությամբ,
3) կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
4) ինստիտուցիոնալ հավատարմագրման ժամանակացույցը,
5) պայմանագրով նախատեսված ծառայության գինը՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ) և վճարման ժամանակացույցը:

2.1 Դիմում-հայտի եր վերցնելը՝ հավատարմագրման գործընթացի դադարեցումը

ՈԱԱԿ-ի հետ կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով իրեն վերապահված իրավունքի համաձայն՝ ուսումնական հաստատությունը կարող է դուրս գալ հավատարմագրման գործընթացից:

Ուսումնական հաստատության ղեկավարը գրավոր տեղեկացնում է ՈԱԱԿ-ի տնօրենին հավատարմագրման գործընթացից դուրս գալու ՄՈՒՀ-ի որոշման մասին: ՈԱԱԿ-ի տնօրենը գործընթացների դադարեցման հրաման է տալիս և այդ մասին հայտնում Հավատարմագրման հանձնաժողովին: ՄՈՒՀ-ի խնդրանքով հաստատությանը կարող են տրամադրվել փորձագիտական խմբի կատարած աշխատանքի արդյունքները: ՈԱԱԿ-ը տրամադրում է այդ արդյունքները, եթե հաստատության գործընթացից դուրս գալու պահին առկա են փորձագիտական խմբի աշխատանքի որոշակի ավարտուն արդյունքներ:

Հավատարմագրման գործընթացից դուրս գալու դեպքում ֆինանսական հարաբերությունները կարգավորվում են ՄՈՒՀ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով:

3. Փորձագիտական խմբի ձևավորումը

ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների կամ մասնագիտության կրթական ծրագրի փորձաքննության՝ արտաքին գնահատման իրականացման համար ձևավորվում է անկախ փորձագիտական խումբ: ՈԱԱԿ-ի փորձագետների շտեմարանից (http://forms.anqa.am) ընտրվում և ձևավորվում է 4-7 հոգանոց փորձագիտական խումբ՝ ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի հաստատած «Փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան:

Փորձագիտական խմբի անդամներից մեկն ընտրվում է ղեկավար: Վերջինս ղեկավարում և պատասխանատվություն է կրում փորձաքննության ողջ գործընթացի անցկացման և փորձագիտական խմբի աշխատանքների, բոլոր հանդիպումների ղեկավարման, նպատակին ծառայող գործողությունների պլանավորման և սույն ձեռնարկով սահմանված ուղենիշներին հետևելու համար: Փորձագետների ընտրության չափանիշները, ուղենիշները և ներկայացվող պահանջները, ինչպես նաև խմբի ղեկավարի, փորձագետների կարգավիճակը և բոլոր պարտականությունները սահմանված են ՈԱԱԿ-ի «Փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ով և ավելի մանրամասն ներկայացված են սույն ձեռնարկի V բաժնում:

Փորձագիտական խմբի ձևավորման կարևոր քայլերից մեկն ուսումնական հաստատության հետ փորձագիտական խմբի կազմի համաձայնեցումն է:

ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովին է ներկայացնում 7-10 փորձագետի թեկնածություններ: Այնուհետև համաձայնեցված ցանկից ձևավորվում է փորձագիտական խումբ:

Խմբի նախնական կազմն ուղարկվում է ուսումնական հաստատություն՝ համաձայնեցման:

Ուսումնական հաստատությունը գրավոր ներկայացնում է իր համաձայնությունը կամ առարկությունները: Փորձագիտական խմբի թեկնածուներից մեկի կամ մի քանիսի վերաբերյալ առարկությունների դեպքում ուսումնական հաստատությունը պարտավոր է ներկայացնել գրավոր հիմնավորված բացարկ:

ՈԱԱԿ-ը մանրամասն ուսումնասիրում է թեկնածուի մերժման հիմնավորումը և բացարկն ընդունելու դեպքում փորձագիտական խմբի կազմում կատարում է համապատասխան փոփոխություն՝ Հավատարմագրման հանձնաժողովի հետ համաձայնեցված ցուցակից ընտրելով մեկ այլ թեկնածուի: ՄՈՒՀ-ի հաստատմանն են ներկայացվում նոր թեկնածուի տվյալները: Փորձագիտական խմբի վերջնական կազմը հաստատվում է ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով: ՈԱԱԿ-ը փորձագետների հետ կնքում է վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Համաձայնեցման գործընթացը կարող է տևել երկու շաբաթ: Գործընթացի արդյունքում համաձայնության չգալու դեպքում ՈԱԱԿ-ի և ՄՈՒՀ-ի միջև կնքված պայմանագիրը երկարացվում է մեկ ամիս ժամկետով՝ փորձագիտական խմբի կազմի վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու համար: Մեկամսյա ժամկետի ավարտից հետո փորձագիտական խմբի նոր կազմի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում ուսումնական հաստատության հետ կնքված պայմանագրի գործողությունը դադարեցվում է: Հավատարմագրման գործընթացը վերսկսելու նպատակով հաստատությունը պետք է ներկայացնի նոր դիմում-հայտ, որից հետո կնքվում է նոր պայմանագիր:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգելու և ամբողջ գործընթացի պլանավորմանն ու իրականացմանն աջակցելու նպատակով ՈԱԱԿ-ի աշխատակիցներից մեկը տնօրենի հրամանով նշանակվում է հավատարմագրման գործընթացի համակարգող /այսուհետ՝ Համակարգող/: Համակարգողը պատասխանատու է Հավատարմագրման կարգում և սույն ձեռնարկում սահմանված ընթացակարգերի (ինքնավերլուծության ընդունում, վերջնական փորձագիտական զեկույցի պատրաստում և այլն) իրականացմանը ճշգրիտ և ժամանակին աջակցելու համար: Համակարգողի պարտականությունների շրջանակը սահմանվում է սույն ձեռնարկով և ներկայացված է ձեռնարկի V բաժնում:

4. Հավատարմագրման գործընթացի փուլերը

Հավատարմագրման գործընթացներն իրականացվում են երեք հաջորդական փուլերով.

առաջին փուլ. ինստիտուցիոնալ կարողությունների կամ մասնագիտության կրթական ծրագրերի ներքին գնահատում ուսումնական հաստատության կողմից (ինքնավերլուծություն),

երկրորդ փուլ. արտաքին գնահատում անկախ փորձագիտական խմբի կողմից (փորձաքննություն),

երրորդ փուլ. հավատարմագրման շնորհման կամ մերժման վերաբերյալ որոշման կայացում ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի կողմից:

4.1 Ինքնավերլուծություն

Խրախուսվում է, որ ՄՈՒՀ-ը պարբերաբար իրականացնի ինստիտուցիոնալ կարողությունների և կրթական ծրագրերի ներքին գնահատում: Այս գործընթացը հնարավորություն է ընձեռում վերանայելու պլանավորված գործողությունները, վերլուծելու արդյունքները, հայտնաբերելու խնդիրները և բարելավման ենթակա ոլորտները, այնուհետև, հիմնվելով գնահատման արդյունքների վրա, ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ, ինչպես նաև իրականացնելու ռեսուրսների բաշխում՝ գործընթացների իրականացման հետագա բարելավման նպատակով:

Գնահատումը կօգնի հաստատությանը հասնել իր նպատակներին՝ օգտագործելով համակարգված և հետևողական մոտեցում, գնահատել ու բարելավել կառավարման արդյունավետությունը:

Հավատարմագրման գործընթացը պահանջում է, որ հաստատություններն ինքնավերլուծության միջոցով մանրամասն վերլուծեն իրենց առաքելության, նպատակների, ռազմավարության, տարբեր գործընթացների և ձեռքբերումների արդյունավետությունը:

Պետական հավատարմագրման գործընթացի մեկնարկից հետո 12 շաբաթվա ընթացքում ՄՈՒՀ-ը պետք է ներկայացնի վերջին հինգ տարվա իր գործունեության ինքնավերլուծությունը:

Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման շրջանակներում ՄՈՒՀ-ը պետք է իրականացնի համապատասխանաբար ինստիտուցիոնալ կարողությունների և հավատարմագրման ենթակա մասնագիտության կրթական ծրագրի ներքին գնահատում՝ ինքնավերլուծություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959–Ն որոշմամբ հաստատված «Մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների»:

Ինքնավերլուծության մեջ ուսումնական հաստատությունը պետք է բարձրացնի հարցեր, որոնց վերաբերյալ արտաքին կարծիքի և խորհրդատվության կարիք ունի: Ինքնավերլուծության վերլուծական բնույթը, դրանում հաստատության կողմից կայացված որոշումների հիմնավորվածությունը կնպաստեն արտաքին գնահատման արդյունավետությանը: Սա կնպաստի նաև, որ փորձագիտական խումբն արդյունավետ լինի իր գնահատումներում և խորհրդատվություններում՝ նպատակ ունենալով հստակ ընկալել ՄՈՒՀ-ի լավագույն փորձը, խնդիրները և կայունությունը որակավորումների արժանահավատ շնորհման, ռիսկերի կառավարման, բարելավման և զարգացման հնարավորությունների, ինչպես նաև երկարաժամկետ զարգացման տեսանկյուններից:

Ինքնավերլուծության գործընթացին նպաստելու համար ՈԱԱԿ-ը մշակել է մի շարք ուղենիշներ, ներառյալ.

- ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնավերլուծության ձևաչափեր, որոնք Հավատարմագրման կարգի բաղկացուցիչ մասն են,
- ինքնավերլուծության ուղեցույց:

Ակնկալվում է, որ ինքնավերլուծության մեջ հաստատությունը կպարզաբանի ներկայացվող խնդիրների կամ գործընթացների մասին չորս կարևոր հարցերի պատասխաններ.

- ի՞նչ է պլանավորել անել ՄՈՒՀ-ը խնդրի լուծման ուղղությամբ,
- ի՞նչ գործընթացներ են իրականացվում փաստացի,
- ինչպե՞ս է ՄՈՒՀ-ը համոզվում, որ իր մեխանիզմներն աշխատում են (ինչպե՞ս է նախատեսվել ստուգել-գնահատել արդյունքները, ինչպիսի՞ տվյալներ են հավաքվել, ինչպիսի՞ վերլուծություններ կան, ինչպե՞ս են կիրառվում վերլուծությունների արդյունքները),
- ի՞նչ փոփոխություններ կան ՄՈՒՀ-ում բարելավման ուղղությամբ:

Առանձնապես կարևոր է ցուցադրել, թե իրականացվող միջոցառումներն ինչ չափով են ուղղված ուսանողի ուսումնառությանը և որակավորման արժանահավատ շնորհմանը:

Անհրաժեշտ է, որ հաստատությունը հստակ հետևի ինքնավերլուծության ձևաչափին, պահպանի ձևաչափի կառուցվածքը, առանձին մասերի հերթականությունը և բովանդակությունը, թույլ չտա բացթողումներ: Կարևոր է, որ ներկայացված ինքնավերլուծության ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներում տեքստը, հղումները, գծապատկերները և աղյուսակները լինեն հստակ և ընթեռնելի: Ինքնավելուծության էլեկտրոնային տարբերակում հղումները պետք է լինեն հիպերլինքերի ձևով: Ինքնավերլուծությունը և որպես հիմք ներկայացված փաստաթղթերը պետք է լինեն համապատասխան մարմնի կողմից հաստատված:

Ինքնավերլուծության մեջ կարող են լինել հղումներ փաստաթղթերին, որոնք որպես հավելվածներ չեն կցվել ինքնավերլուծությանը, սակայն հաստատության կողմից ներկայացված են ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարում, ինչպես նաև հղում կատարել այն փաստաթղթերին, որոնց փորձագիտական խումբը կարող է ծանոթանալ այցի ժամանակ:

Ինքնավերլուծությունը պատրաստվում է երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն: Ինքնավերլուծության անգլերեն տեքստի հետ միասին ՄՈՒՀ-ը պետք է ներկայացնի մի շարք փաստաթղթերի անգլերեն թարգմանությունները՝ միջազգային փորձագետին տրամադրելու համար: Այդ փաստաթղթերն են՝ ինքնավերլուծության հավելվածների ցանկը, հաստատության կանոնադրությունը, նրա կառուցվածքը, առաքելությունը պարունակող փաստաթուղթը, ռազմավարական ծրագիրը, իրականացվող կրթական ծրագրերը և շնորհվող որակավորումները, ուսանողների գնահատման կարգը, որակի ապահովման համակարգի նկարագրությունը պարունակող փաստաթուղթը, ինչպես նաև այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ կհամարի հաստատությունը:

Առանց հավելվածների ինստիտուցիոնալ ինքնավերլուծությունը չպետք է գերազանցի 130 էջի սահմանը, իսկ հավելվածների քանակը՝ 15, մասնագիտության կրթական ծրագրի ինքնավերլուծությունը՝ 70 էջի սահմանը, իսկ հավելվածների քանակը՝ 10: Ինքնավերլուծության մեջ կարող է հղում կատարվել ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարում վերբեռնված ֆայլերին՝ բացառելով տեղեկատվության կրկնությունը ինչպես ինքնավերլուծության տեքստում, այնպես էլ՝ հավելվածների տեսքով:

Հայերեն տեքստը պետք է հավաքված լինի GHEA Grapalat տառատեսակով, 11 տառաչափով և տողերի 1.15 միջակայքով, անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակով, նույն տառաչափով և միջակայքով:

ՈԱԱԿ-ը որոշում է կայացնում ինքնավերլուծության ընդունման կամ մերժման մասին՝ Հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգի համաձայն:

ՈԱԱԿ-ը կարող է որոշում կայացնել ինքնավերլուծությունը ետ վերադարձնելու մասին՝ հավատարմագրման կարգով սահմանված դեպքերում, եթե.

1) այն չի համապատասխանում հավատարմագրման կարգի բաղկացուցիչ մասը հանդիսացող միասնական ձևաչափին,

2) առկա են բովանդակային, տեխնիկական, կառուցվածքային կամ այլ թերություններ,
3) ինքնավերլուծության մեջ արտացոլված տվյալները հավաստի չեն:

Այս դեպքում հաստատությանը տրվում է մեկամսյա ժամկետ՝ թերությունները վերացնելու համար:

4.2 *Փորձաքննություն*

Փորձաքննության նպատակն է փորձագիտական խմբի միջոցով իրականացնել ՈԱԱԿ-ին դիմած ուսումնական հաստատության, նրա ենթակառույցների, գործընթացների, առանձին կրթական ծրագրերի արտաքին գնահատում և պատրաստել փորձագիտական զեկույց ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովին ներկայացնելու համար:

Փորձագիտական խմբի անդամները հանդես են գալիս որպես **կառուցողական գործընկեր-գնահատողներ**: Փորձագիտական խումբն իր գործունեությունն իրականացնում է օրինականության և անկախության սկզբունքների հիման վրա՝ առաջնորդվելով հետևյալ կարգավորող փաստաթղթերով.

- «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշումով,
- «Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշումով,
- «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատագրման հանձնաժողովի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացման քաղաքականությունը հաստատելու մասին «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային

կենտրոն» հիմնադրամի հավատագրման հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 35-Լ որոշմամբ,

- «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով /նոր խմբագրությամբ/՝ հաստատված «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի 2020 թվականի մայիսի 8-ի N 1-Լ որոշմամբ,
- «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի էթիկայի և վարքագծի կանոններով:

Փորձաքննության երեք հիմնական քայլերն են.

- **Փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն**. փորձագիտական խումբը ծանոթանում է ՄՈՒՀ-ի ներկայացրած ինքնավերլուծությանը և կից փաստաթղթերի փաթեթին, այնուհետև իրականացնում նախնական գնահատում՝ ՈԱԱԿ-ի կողմից տրամադրված ձևաչափի համաձայն: Փորձագիտական խումբը մատնանշում է բացակայող տեղեկատվությունը և այցի ընթացքում ճշտման կարիք ունեցող հարցերը:
- **Փորձագիտական այց.** փորձագիտական խմբի այցն իրականացվում է երեք եղանակներից որևէ մեկով՝ առկա, հեռավար, հիբրիդային (առկա և հեռավար ձևերի համադրում)՝ կախված իրավիճակից: Փորձագիտական այցի ձևը համաձայնեցվում է մասնագիտական ուսումնական հաստատության հետ: Ընդ որում, ամբողջական կամ մասնակի հեռավար այցը ենթադրում է հավելյալ փաստաթղթերի տրամադրում ինչպես ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարում վերբեռնմամբ, այնպես էլ փորձագիտական խմբի պահանջով: Փորձագիտական այցի ժամանակ փորձագիտական խմբի կողմից իրականացվող ուսումնասիրությունները, խմբային քննարկումներն ու հանդիպումները (առկա կամ հեռավար) ուղղված են փորձաքննության ենթակա հաստատության գործունեության կամ

կրթական ծրագրի իրականացման վերաբերյալ ավելի հստակ պատկերացում կազմելուն: Հեռավար, հիբրիդային եղանակներով փորձաքննության առանձնահատկությունները սահմանված են «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի արտակարգ դրության պայմաններում հավատարմագրման կազմակերպման և անցկացման ընթացակարգով՝ հաստատված Հոգաբարձուների խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 7-Լ որոշմամբ:

- **Փորձագիտական զեկույցի պատրաստում.** փորձագիտական խումբը պատրաստում է զեկույց, որը ներառում է իրավիճակի վերլուծություն, ձեռքբերումների հավաստում և հետագա բարելավումների համար խորհրդատվություն:

4.2.1 Փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն

Փաստաթղթերի նախնական ուսումնասիրության նպատակն է գնահատել ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների կամ մասնագիտության կրթական ծրագրի ինքնավերլուծության և ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հավատարմագրման չափանիշներին և պետական կրթական չափորոշիչներին՝ արդյունավետության և կիրառելիության տեսանկյունից:

Ինքնավերլուծությունը և փաստաթղթերի փաթեթը ՈԱԱԿ-ի համակարգողից ստանալուց հետո փորձագիտական խումբը ուսումնասիրում է փաստաթղթերը և իրականացնում նախնական գնահատում:

Փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում փորձագիտական խումբը ձգտում է պատասխանել հետևյալ հարցերին.

- արդյո՞ք ինքնավերլուծության մեջ ներկայացված է առկա վիճակի մանրամասն վերլուծություն՝ գնահատելով ՄՈՒՀ-ի կամ կրթական ծրագրի ուժեղ և թույլ կողմերը,
- արդյո՞ք ինքնավերլուծությունը պարունակում է բավականաչափ փաստեր փորձագիտական գնահատում իրականացնելու համար,
- արդյո՞ք ներկայացված փաստերը բխում են հավաստի աղբյուրներից,

- արդյո՞ք ինքնավերլուծությունում ներկայացված են համապատասխան ոլորտների բարելավմանն ուղղված ռազմավարություն և գործողություններ:

Այսպիսով, փաստաթղթերի նախնական ուսումնասիրման ընթացքում փորձագետները պարտավոր են.

- առանձնացնել հաստատության կամ կրթական ծրագրի ուժեղ և թույլ կողմերը,
- ամեն մի չափորոշչի վերաբերյալ դուրս բերել վստահելի փաստեր, ինչպես նաև այն փաստերը, որոնք դեռևս ենթակա են հավաստման փորձագիտական այցի ընթացքում,
- դուրս բերել այն փաստաթղթերը, որոնք ենթակա են ուսումնասիրման,
- ընդգծել այն ոլորտները, որոնք անհրաժեշտ է լրացուցիչ ուսումնասիրել և գնահատել:

Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրման ենթակա հարցերը պետք է ամփոփվեն և ձևակերպված լինեն ըստ հավատարմագրման չափանիշների: Համակարգողը պետք է հետևի, որ լրացուցիչ ուսումնասիրման ենթակա խնդիրները վերաբերեն հաստատությանը, այլ ոչ թե արտահայտեն փորձագետների անձնական հետաքրքրությունները:

ՄՈՒՀ-ի գործունեության և կրթական ծրագրի իրականացման արդյունավետ գնահատման նպատակով փորձագիտական խմբին անհրաժեշտ գործիքներով ապահովելու համար ՈԱԱԿ-ը տրամադրում է փաստաթղթերի փաթեթ, որը պարունակում է.

- անհրաժեշտ նորմատիվ իրավական փաստաթղթեր,
- նախնական գնահատման և վերջնական զեկույցի պատրաստման ուղենիշներ և համապատասխան ձևաչափեր,
- հավատարմագրման գործընթացի իրականացման, իսկ հետագայում նաև փորձագիտական այցի հաստատված ժամանակացույցներ,
- այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում տեղի ունեցող փորձագիտական խմբի հանդիպումների ժամանակ փորձագետները

ներկայացնում և քննարկում են յուրաքանչյուր չափորոշչի վերաբերյալ իրենց դիտարկումները՝ ըստ ՈԱԱԿ-ի ձևաչափի:

Նախապատրաստական փուլում փորձագիտական խումբն ուսումնասիրում է ընտրված երեք կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողներին տրվող մասնագիտական հանձնարարականները և պատրաստվում հանդիպումների կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ:

Նախապատրաստական փուլում միջազգային փորձագետի հետ համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու համար նրա դիտարկումները թարգմանվում և տրամադրվում են խմբի բոլոր անդամներին, բացի այդ, պարբերաբար կազմակերպվում են առցանց-հանդիպումներ և քննարկումներ:

Այս փուլի ավարտին փորձագիտական խումբը պետք է հստակեցրած լինի այցի ժամանակ ուսումնասիրման ենթակա խնդիրները, հանդիպումների ցանկը, անհրաժեշտ հավելյալ տեղեկատվությունը և դրա ստացման աղբյուրները, լրացուցիչ փաստաթղթերի ցանկը:

4.3 Փորձագիտական այց մասնագիտական ուսումնական հաստատություն

4.3.1 Նախապատրաստական այց

Մինչև ուսումնական հաստատություն փորձագետների խմբի այցը՝ ՈԱԱԿ-ի համակարգողը, խորհրդակցելով փորձագիտական խմբի ղեկավարի հետ, մշակում է այցի ժամանակացույցը:

Ժամանակացույցը պետք է թույլ տա փորձագիտական խմբին բազմակողմանի ուսումնասիրել վեր հանված բոլոր խնդիրները և ստանալ գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվությունը: Այցից առաջ ՈԱԱԿ-ի համակարգողը փորձագիտական այցի ժամանակացույցի նախնական տարբերակն էլեկտրոնային փոստով ուղարկում է հաստատության Պատասխանատու անձին, իսկ երկու շաբաթ առաջ համակարգողը և փորձագիտական խմբի ղեկավարը կատարում են նախապատրաստական այց (կամ իրականացվում է առցանց հանդիպում)՝ ուսումնական

հաստատության հետ փորձագիտական այցի ժամանակացույցը քննարկելու համար:

Նախապատրաստական այցն ունի չորս հիմնական նպատակ.

- ՄՈՒՀ-ի հետ համաձայնեցնել փորձագիտական այցի ժամանակացույցը՝ համոզվելու, որ այցի ժամանակացույցով պլանավորված բոլոր գործողությունները հնարավոր է իրագործել նախատեսված ժամանակահատվածում,
- քննարկել փորձագիտական խմբին անհրաժեշտ հավելյալ տեղեկատվությունը՝ համոզվելու, որ այցի ընթացքում ուսումնական հաստատությունը կկարողանա տրամադրել փորձագիտական խմբին անհրաժեշտ փաստաթղթերը և հավելյալ տեղեկատվությունը,
- պարզել՝ կան արդյոք առանձնահատկություններ, որոնց մասին փորձագիտական խումբը պետք է տեղյակ լինի,
- ստուգել ՄՈՒՀ-ի նախապատրաստվածությունը փորձագիտական այցին (ներառյալ առաջարկվող աշխատասենյակները, հանդիպումների սրահը, տրամադրվող տեխնիկական միջոցները և այլն):

Նախապատրաստական այցի ժամանակ տեղի է ունենում ՈԱԱԿ-ի համակարգողի և փորձագիտական խմբի ղեկավարի հանդիպումը ՄՈՒՀ-ի ղեկավարի, ինչպես նաև ՄՈՒՀ-ի գործընթացի համար Պատասխանատու անձի և/կամ որակի ապահովման խմբի հետ:

ՈԱԱԿ-ի համակարգողը փորձաքննություն անցնող ուսումնական հաստատությանը տրամադրում է անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը փորձաքննության գործընթացի վերաբերյալ, այդ թվում՝ փորձագիտական այցի ժամանակացույցը:

Հաստատությանն է տրամադրվում նաև այն փաստաթղթերի ցանկը, որոնք փորձագիտական խումբն առանձնացրել է լրացուցիչ ուսումնասիրության համար: Հնարավոր է, որ խումբը ցանկանա որոշ փաստաթղթեր ուսումնասիրել մինչև այցը, ուստի Պատասխանատու անձը պարտավոր է կազմակերպել դրանց փոխանցումը փորձագետներին պայմանավորված ժամկետներում:

Իր հերթին ուսումնական հաստատությունը ներկայացնում է ամեն մի հանդիպման համար առաջարկվող մասնակիցների ցանկերը: Ներկայացված ցուցակները պետք է պարունակեն ավելի շատ թեկնածուներ, քան անհրաժեշտ է, որպեսզի փորձագիտական խումբը կարողանա ընտրություն իրականացնել: Հանդիպումներին մասնակիցների ներկայությունն ապահովվելու համար պատասխանատու է ուսումնական հաստատությունը, ուստի հաստատությունը պետք է նախօրոք ճշտի ամեն մի թեկնածուի մասնակցության հնարավորությունը և կազմի իրատեսական ցուցակ: Դա առանձնապես վերաբերում է կառավարման բարձր օղակների (ՄՈՒՀ-ի կառավարման խորհուրդ, գիտական խորհուրդ) և արտաքին շահակիցների (շրջանավարտներ, գործատուներ և այլն) ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

Այցի պլանով նախատեսվում են նաև լրացուցիչ հանդիպումներ փորձագիտական խմբի ընտրությամբ, ինչպես նաև հաստատության առաջարկով և փորձագիտական խմբի հաստատմամբ:

Այցին նախորդող ժամանակամիջոցում ուսումնական հաստատությունը պետք է տեղեկացնի բոլորին, որ այցի շրջանակում փորձագետները կարող են տալ ցանկացած հարց ցանկացած աշխատակցին կամ ուսանողին, և որ պատասխանները մնում են գաղտնի: Հաստատության ստորաբաժանումների ղեկավարները պետք է տեղեկացված լինեն, որ պարտավոր են փորձաքննության շրջանակներում խմբի անդամներին ուսումնասիրության համար տրամադրել ցանկացած տեղեկատվություն և փաստաթուղթ, ինչպես նաև դրանց կրկնօրինակները: Այդ նպատակով նախապատրաստական շաբաթների ընթացքում ՄՈՒՀ-ում տեղի են ունենում Պատասխանատու անձի նախապատրաստական հանդիպումները ՄՈՒՀ-ի անձնակազմի, ուսանողների և այլ շահակիցների հետ:

Եթե ուսումնական հաստատությունը գործունեություն է իրականացնում տարբեր վայրերում, և հիմնական այցի շրջանակում դիտումները երկար ժամանակ կպահանջեն, այս փուլում կարող են կատարվել փոխհամաձայնեցված այցելություններ այդ վայրեր: Այդպիսի այցերն իրականացվում են փորձագիտական խմբի անդամներից կազմված խմբի

կողմից: Խմբի կազմում պետք է լինեն փորձագիտական խմբի համակարգողը և/կամ խմբի ղեկավարը, խմբի մեկ կամ երկու այլ անդամներ: Նախնական գնահատման փուլում փորձագիտական խմբի կողմից կարող են իրականացվել դասալսումներ առկա կամ հեռավար տարբերակով:

Նախապատրաստական այցից հետո համակարգողը փորձագիտական խմբին տրամադրում է ՈԱԱԿ-ի տնօրենի և հաստատության ղեկավարի կողմից հաստատված այցի վերջնական ժամանակացույցը, ինչպես նաև հաստատության կողմից տրամադրված հանդիպումների մասնակիցների ցուցակը:

Մեկ շաբաթվա ընթացքում փորձագետներն ընտրում են հանդիպումների մասնակիցներին՝ պահպանելով տարբեր խմբերի ներկայացուցչականությունը: Մասնակիցների վերջնական ցանկը համակարգողն ուղարկում է գործընթացի Պատասխանատու անձին փորձագիտական այցին նախորդող շաբաթվա ընթացքում:

4.3.2 *Փորձագիտական այց*

Այցն արտաքին գնահատման գործընթացի կարևոր մաս է, երբ փորձագիտական խումբն իր աշխատանքն իրականացնում է մասնագիտական ուսումնական հաստատությունում:

Փորձագիտական այցի հիմնական նպատակներն են.

- պարզել ինքնավերլուծության մեջ նշված փաստերի և տեղեկատվության հավաստիությունը,
- ձեռք բերել լրացուցիչ տեղեկատվություն հանդիպումների և հարցումների միջոցով,
- ուսումնասիրել կրթական գործընթացները և լրացուցիչ փաստաթղթերը,
- ավելի լավ պատկերացում կազմել փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության գործունեության կամ կրթական ծրագրերի վերաբերյալ:

Փորձագիտական այցը տևում է 3-7 օր՝ կախված հավատարմագրման տեսակից, ինչպես նաև փորձաքննության ենթակա ուսումնական

հաստատության մեծությունից և առանձնահատկություններից, մասնաշենքերի ու մասնաճյուղերի առկայությունից և այլն: Փորձագիտական այցը կարող է իրականացվել նաև առցանց եղանակով՝ պայմանավորված արտակարգ իրավիճակներով: Առցանց այցի առանձնահատկությունները սահմանված են «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի արտակարգ դրության պայմաններում հավատարմագրման կազմակերպման և անցկացման ընթացակարգով՝ հաստատված Հոգաբարձուների խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 7-Լ որոշմամբ:

Փորձագիտական այցին նախորդում է փորձագիտական խմբի փակ հանդիպումը, որի նպատակներն են.

- միջազգային փորձագետի հետ քննարկել իրականացված աշխատանքների արդյունքները,
- քննարկել նախնական գնահատումից հետո ստացված լրացուցիչ տեղեկատվությունը,
- մանրամասն պլանավորել յուրաքանչյուր հանդիպման և ֆոկուս խմբային քննարկման բովանդակությունը, ինչպես նաև հստակեցնել այն հարցերը, որոնք կարող են առաջանալ գործընթացում,
- ուսումնասիրել այցի տեխնիկական պատրաստվածությունը:

Փորձագիտական այցի արդյունավետությունն ապահովելու համար փորձագիտական խումբը պետք է հստակեցնի ձեռք բերվող անհրաժեշտ առաջնահերթ տեղեկատվությունը և իրականացնի ուսումնասիրման ենթակա խնդիրների բաշխում փորձագետների միջև՝ հաշվի առնելով խմբի անդամների փորձառությունը: Գործընթացի արդյունավետ կազմակերպման համար պատասխանատու են փորձագիտական խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը: Խմբի ղեկավարը պատասխանատու է նաև բոլոր հանդիպումների անցկացման, իսկ համակարգողը՝ արձանագրությունների կազմման համար:

4.3.3 Փորձագիտական այցի ընթացքում հանդիպումների տեսակները

1. Այցի ժամանակացույցով սահմանված հանդիպումներ հաստատության ներկայացուցիչների հետ

Հաստատության ներկայացուցիչների հետ ժամանակացույցով նախատեսված հանդիպումների մասնակիցները նախատեսված ժամին ներկայանում են հանդիպումների համար առանձնացված սենյակ կամ հեռավար հարթակ, որը կառավարվում է փորձագիտական խմբի համակարգողի կողմից: Մասնակիցների ներկայությունն ապահովում է գործընթացի համար Պատասխանատու անձը:

Հանդիպումները վարում են խմբի անդամները՝ հետևելով նախապես դուրս բերված խնդիրներին:

Փորձագիտական խմբի համակարգողը պատասխանատու է արձանագրությունների, գրառումների կատարման և ժամանակացույցի պահպանման համար: Յուրաքանչյուր հանդիպման ընթացքում փորձագիտական խմբի բոլոր անդամները նույնպես կատարում են գրառումներ՝ փորձագիտական զեկույցում օգտագործելու համար:

Այցի ընթացքում փորձագիտական խմբի անդամները պետք է աշխատեն թիմով: Սակայն, անհրաժեշտության դեպքում, խումբը կարող է բաժանվել ենթախմբերի՝ ուսումնասիրելու իրենց փորձառությանն ավելի համապատասխան ոլորտները: Այս պարագայում փորձագիտական խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պետք է ղեկավարեն տարբեր խմբեր:

2. Հանդիպումներ ՄՈՒՀ-ի ստորաբաժանումներում

Սովորաբար ստորաբաժանումների աշխատակիցների հետ հանդիպումների նպատակն է պարզաբանել փաստաթղթերի նախնական ուսումնասիրության ընթացքում վեր հանված խնդիրները կամ տեղում դիտարկել ուսումնական ռեսուրսները: Այս դեպքում փորձագիտական խումբն ինքն է այցելում (առկա կամ հեռավար) հաստատության ստորաբաժանումներ և իրականացնում դիտարկումներ կամ ունենում քննարկումներ: Նման հանդիպումները սահմանվում են ժամանակացույցով, սակայն փորձագիտական խմբի որոշմամբ կարող են փոփոխվել: Հանդիպումը կարող

է լինել անձնակազմի որևէ անդամի, վարչական աշխատակցի կամ այլ շահակցի հետ:

3. Մասնագիտական հանդիպումներ

Մասնագիտական զրույց-քննարկումների նպատակն է քննարկել ներկայացված երեք ՄԿԾ-ների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականների դիտարկման արդյունքում դուրս բերված հարցերը կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ:

Այս հանդիպումների ժամանակ փորձագիտական խմբի անդամները ըստ ոլորտների բաժանվում են երեք խմբի և քննարկումներ են ունենում՝ պարզելու ուսանողների առաջընթացի և մասնագիտական մտածողության ձևավորման ընթացքում առաջացած հիմնահարցերը:

Հանդիպումները տեղի են ունենում զուգահեռ, ինչը նախապես ամրագրվում է փորձագիտական այցի ժամանակացույցում և համաձայնացվում հաստատության հետ:

4. Փակ հանդիպումներ

Փակ հանդիպումները նախատեսված են միայն փորձագիտական խմբի անդամների և համակարգողի համար. այդ հանդիպումների նպատակն է ամփոփել հիմնական արդյունքները, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ձեռք բերել համընդհանուր ընկալում ու համաձայնություն, սկսել զեկույցի պատրաստման աշխատանքները: Փակ հանդիպումները տեղի են ունենում երեք տարբեր ձևաչափով.

ա) <u>Ամենօրյա փակ հանդիպումներ</u>. սովորաբար տեղի են ունենում այցի յուրաքանչյուր օրվա վերջում: Այս հանդիպումների ընթացքում պետք է ամփոփվեն օրվա արդյունքները՝ ըստ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների, իրականացվեն այն ոլորտների գնահատումները, որոնց ուսումնասիրությունն ավարտված է, ինչպես նաև քննարկվեն և/կամ վերանայվեն ուսումնասիրման ենթակա հարցերը: Նման հանդիպման ընթացքում կարելի է քննարկել նաև այցի պլանի փոփոխությունները կամ

ավելացումները: Փակ հանդիպումները խմբի անդամներին հնարավորություն են տալիս նաև ամփոփելու առանձին խմբերով իրականացրած հանդիպումների արդյունքները:

բ) <u>Տեղում կազմակերպվող փակ հանդիպումներ.</u> անհրաժեշտության դեպքում կազմակերպվում են այցի ընթացքում տեղի ունեցած որոշակի իրադարձությունից հետո: Այսպիսի հանդիպումներ կարող են կազմակերպվել փորձագիտական խմբի նախաձեռնությամբ՝ համակարգողի կազմակերպմամբ:

գ) <u>Վերջնական փակ հանդիպում այցի ավարտից առաջ.</u> նպատակն է ամփոփել այցի արդյունքները և ձեռքբերումները, փորձագիտական զեկույցի բովանդակային կառուցվածքը: Այս հանդիպման կարևոր բաղադրիչը փորձագիտական խմբի բոլոր անդամների համաձայնության ձեռքբերումն է հավատարմագրման չափանիշների գնահատականների և դրանց հիմնավորումների շուրջ, որոնք պետք է ներառվեն փորձագիտական զեկույցում: Փորձագիտական խմբի ղեկավարը պատասխանատու է խմբի կողմից վեր հանված, հաստատության ձեռքբերումներն ու հետագա բարելավման կարիք ունեցող ոլորտներն արձանագրելու, ինչպես նաև զեկույցի հիմնական ուղղությունները պահպանելու համար:

5. Բաց հանդիպումներ

Բաց հանդիպումները նախատեսվում են այցի ժամանակացույցով և հնարավորություն են տալիս արտաքին և ներքին շահակիցներին հանդիպել փորձագիտական խմբի հետ՝ որոշակի հարցեր քննարկելու կամ գործընթացի մասին կարծիք հայտնելու համար:

Ուսումնական հաստատությունն այցի համաձայնեցված ժամանակացույցով նախատեսված բաց հանդիպումների մասին հայտարարում է այցից երկու շաբաթ առաջ: Փորձագիտական այցի հաստատված ժամանակացույցը և բաց հանդիպումների մասին հայտարարությունը պետք է հասանելի լինեն բոլոր շահակիցների համար:

Բաց հանդիպումների մասնակիցների գրանցումը կատարում է ՈԱԱԿ-ի համակարգողը: Յուրաքանչյուր դիմողին հնարավորություն է ընձեռվում ոչ

ավել, քան 15 րոպե տևողությամբ հանդիպում ունենալ փորձագետների հետ: Բաց հանդիպումների մասնակիցները կարող են փորձագետներին հանձնել գրավոր դիմումներ, որտեղ պետք է արտացոլված լինեն այն խնդիրները, որոնց վրա նրանք կցանկանային հրավիրել փորձագետների ուշադրությունը:

Փորձագիտական խումբը պարտադիր ուսումնասիրում է բաց հանդիպման ժամանակ ստացված ցանկացած տեղեկատվության հիմքերը, վերլուծում դրանք և հաշվի առնում իր հետագա քննարկումների ընթացքում:

6. Ամփոփիչ հանդիպում

Ամփոփիչ հանդիպումը փորձագիտական այցի պաշտոնական փակման փուլն է, որի նպատակն է ներկայացնել հաստատության ղեկավարությանը այցի նախնական արդյունքները:

Փորձագիտական խմբի անդամները հանդիպում են փորձաքննություն անցած ուսումնական հաստատության ղեկավարի և նրա կողմից հրավիրված այլ աշխատակիցների հետ: Ամփոփիչ հանդիպման ընթացքում փորձագիտական խմբի ղեկավարը հակիրճ ամփոփում է փորձագիտական այցը, ինչն արձանագրվում է փորձագիտական խմբի համակարգողի կողմից:

Գործընթացի գնահատման արդյունքները հիմք են հանդիսանում ՈԱԱԿ-ի մոտեցումների և ընթացակարգերի հետագա բարելավման համար:

Կարևոր է նշել, որ ամփոփիչ հանդիպման ժամանակ որևէ գնահատական չի հնչեցվում, և քննարկում տեղի չի ունենում:

4.4 Փորձագիտական զեկույցի պատրաստում

4.4.1 Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը և համակարգողը պատասխանատու են փորձագիտական զեկույցի պատրաստման համար: Փորձագիտական զեկույցը ներառում է հաստատությունում առկա վիճակը նկարագրող **փաստեր**, որոնք դուրս են բերվել տեղացի և միջազգային փորձագետների կողմից ինքնավերլուծության, կից փաստաթղթերի փաթեթի ուսումնասիրության, ինչպես նաև փորձագիտական այցի ընթացքում: Այդ փաստերը չափանիշի գնահատման վերաբերյալ դատողություններ անելու

հիմք են: Զեկույցում նշվում են ուսումնական հաստատության կամ մասնագիտության կրթական ծրագրի **ուժեղ** և **թույլ կողմերը,** ինչպես նաև փորձագիտական խմբի կողմից տրված **խորհրդատվությունները՝** բարելավմանն ուղղված:

Փորձագիտական զեկույցում յուրաքանչյուր չափանիշի համար ներկայացված **դատողությունները** տվյալ չափանիշի շուրջ դուրս բերված փաստերի վերաբերյալ փորձագիտական խմբի դիրքորոշումն են: Դրանք պետք է նպաստեն այն առանցքային կետերի ցուցադրմանը, որոնք հիմնավորում են չափանիշի գնահատականը և խորհրդատվությունները: Այդ պատճառով դատողությունները պետք է լինեն համընդգրկուն և ըստ էության:

Եզրահանգումը չափանիշի գնահատականի ամփոփումն է, որը պետք է լինի հստակ, առարկայական և շեշտադրի առանցքային կետերը:

Յուրաքանչյուր չափանիշի խորը և համապարփակ վերլուծությունից հետո ներկայացվում է փորձագիտական խմբի **եզրակացությունը** տվյալ չափանիշի վերաբերյալ: Փորձագիտական խումբն իր եզրակացությունը ներկայացնում է «բավարարում է չափանիշի պահանջները» կամ «չի բավարարում չափանիշի պահանջները» գնահատականներից մեկով:

Եթե այս կամ այն ոլորտում իրավիճակի վերաբերյալ փորձագիտական խմբի դիտարկումները ցույց են տալիս, որ հրատապ բարելավման անհրաժեշտություն կա, նման ձևով շարունակելն անթույլատրելի է, քանի որ վտանգվում են կամ որակավորումների արժանահավատ շնորհումն ապահովելու կամ ռիսկերի կառավարման, բարելավման և զարգացման կամ երկարաժամկետ զարգացման գործընթացները, ապա այս դեպքում փորձագիտական խմբի եզարակացությունը կլինի «չի բավարարում չափանիշի պահանջները»:

Եթե փորձագիտական խումբն իր դիտարկումներում վերոնշյալ գործընթացներին սպառնացող վտանգ չի հայտնաբերել, և խորհրդատվություններն ուղղված են բարելավմանը, ապա այս դեպքում փորձագիտական խմբի եզարակացությունը կլինի «բավարարում է չափանիշի պահանջները»:

Փորձագիտական զեկույցը ներառում է նաև խորհրդատվություններ յուրաքանչյուր գնահատվող ոլորտի բարելավման համար: Խորհրդատվությունները հստակ մատնանշում են, թե որ հիմնահարցերը պետք է գտնեն իրենց լուծումները: Խորհրդատվությունները վերաբերում են այս կամ այն ոլորտում կատարվելիք փոփոխություններին, բայց ոչ երբեք փոփոխությունների հստակ գործողություններին: ՄՈՒՀ-ի համար պետք է բավարար տեսանելի լինեն հնարավոր փոփոխությունները և ակնկալվող արդյունքները: Խորհրդատվությունները կարող են նպատակաուղղված լինել.

- դրական փորձի ամրապնդմանը,
- հետագա բարելավմանը,
- թերությունների վերացմանը:

Փորձագիտական զեկույցում ամեն մի չափանիշի վերաբերյալ ներկայացվող փաստերը, դատողությունները, խորհրդատվությունները և եզրակացությունը շարադրվում են տրամաբանական մեկ շղթայում, այնպես, որ փաստերից դեպի եզրակացություն և եզրակացությունից դեպի փաստեր տրամաբանական համակարգը լինի նույնական և մեկը մյուսից բխող: «Եզրակացությունից դեպի փաստեր» դիտարկումը թույլ է տալիս զտել ոչ անհրաժեշտ փաստերը և ուշադրությունը սևեռել ՄՈՒՀ-ի համար առանցքային կետերի վրա:

Փորձագիտական **զեկույցի նախնական տարբերակը** պատրաստվում է փորձագիտական խմբի կողմից՝ համակարգողի աջակցությամբ՝ նախնական գնահատման ու փորձագիտական այցի արդյունքների և փորձագիտական խմբի բոլոր անդամների կարծիքների հիման վրա:

Զեկույցում որպես առանձին մաս ներառվում են միջազգային փորձագետի՝ եվրոպական չափորոշիչներին ու ուղենիշներին համապատասխան գործընկերային գնահատումը և խորհրդատվությունները, որոնք միտված են ՄՈՒՀ-ի մրցունակության բարձրացմանը և ԵԲԿՏ-ին ինտեգրմանը:

Փորձագիտական զեկույցի այս նախնական տարբերակը խմբի բոլոր անդամների հետ համաձայնեցնելուց հետո ուղարկվում է մասնագիտական ուսումնական հաստատություն:

Եթե ուսումնական հաստատությունը զեկույցի վերաբերյալ ունի դիտողություններ և առարկություններ, ապա պետք է հիմնավորի՝

- մանրամասն բացատրելով խնդրահարույց կետերը,
- հստակ փաստեր ներկայացնելով,
- կատարելով հղումներ փորձագիտական զեկույցի համապատասխան բաժիններին,
- անհրաժեշտ մասերի վերավերյալ վերաշարադրելու առաջարկ անելով:

ՄՈՒՀ-ն առարկություն և դիտողություն կարող է անել միայն հաստատությանը վերաբերող փաստերի ու տեղեկատվությանվերաբերյալ: Զեկույցի մյուս բաղադրամասերի վերաբերյալ դիտարկումներն ընդունելի չեն:

ՈԱԱԿ-ի համակարգողը ՄՈՒՀ-ի գրավոր պատասխանը փոխանցում է խմբի անդամներին՝ դիտողություններն ու առաջարկություններն ուսումնասիրելու և քննարկելու համար: Համակարգողը կազմակերպում է նաև փորձագիտական խմբի և հաստատության ներկայացուցիչների համատեղ քննարկում: Անհրաժեշտության դեպքում, զեկույցի նախնական տարբերակում կարող են կատարվել համապատասխան փոփոխություններ:

Փոփոխությունները կատարվում են ավելացվող հատվածի կամ վերաշարադրման մասին հատուկ նշման միջոցով:

Այս գործընթացից հետո զեկույցը բերվում է վերջնական տեսքի և ներկայացվում ՈԱԱԿ-ի քարտուղարություն: Քարտուղարությունը «Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով» նախատեսված ժամկետներում զեկույցն ուղարկում է Հավատարմագրման հանձնաժողովին և ուսումնական հաստատությանը՝ հանձնաժողովի նիստին նախապատրաստվելու համար:

Մինչև հավատարմագրման հանձնաժողովի կողմից որոշման կայացումը և ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հավատարմագրի հաստատումը վերջնական զեկույցը համարվում է գաղտնի փաստաթուղթ և հրապարակման ենթակա չէ:

4. 5 Փորձագիտական խմբի որոշումների կայացում

Փորձագիտական խումբն իր աշխատանքի ընթացքում պարբերաբար կազմակերպում է քննարկումներ: Փակ հանդիպումների ժամանակ խումբը որոշումներ է կայացնում հավատարմագրման չափանիշներին հաստատության ինստիտուցիոնալ կարողությունների կամ մասնագիտության կրթական ծրագրի համապատասխանության վերաբերյալ գնահատական տալու մասին: Բոլոր հանդիպումների ժամանակ փորձագիտական խմբի ղեկավարը և ՈԱԱԿ համակարգողը պետք է ապահովեն գործնական այնպիսի մթնոլորտ, որ խմբի անդամներն ազատ արտահայտեն իրենց կարծիքը, քննարկումներն անցնեն անկողմնակալ և փաստերի վրա հիմնված:

ՈԱԱԿ-ը որդեգրել է այն մոտեցումը, որ խմբի ներսում որոշումները պետք է կայացվեն ոչ թե պարզ քվեարկությամբ, այլ ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) հիման վրա: Քվեարկությունը չի նպաստում համագործակցությանը և փոխզիջումներին, նվազեցնում է առանձին անդամների ներգրավվածությունը և պատասխանատվությունն արդյունքի համար, իսկ ընդհանուր համաձայնությունը թույլ է տալիս ամեն մասնակցի կարծիքը հասցնել բոլորին և լինել միասնական:

Հստակ կիրառության դեպքում համաձայնության գալու գործընթացը կարող է հանգեցնել փորձագիտական խմբի համար առավել ընդունելի լուծմանը:

Քննարկումների և փոխհամաձայնության գործընթացի ապահովման համար պատասխանատու է խմբի ղեկավարը: Նա է բարձրացնում հարցը, կազմակերպում մտքերի փոխանակում՝ պարզելու խմբի անդամների տրամադրվածությունը և դուրս բերելու հնարավոր առաջարկները: Նրա կողմից հնչեցված առաջարկի վերաբերյալ բոլոր անդամները պետք է հստակ արտահայտեն իրենց համաձայնությունը, իսկ լռությունը չպետք է դիտարկվի որպես համաձայնության նշան: Եթե կոնսենսուս չի հաստատվել, ապա այն փորձագետները, ովքեր կողմ չեն առաջարկին, արտահայտում են իրենց վերաբերմունքը՝ ներկայացնելով վտանգները կամ կասկածները: Արդյունքում առաջարկը ճշգրտվում է, վերաձևակերպվում կամ լրացվում, ինչից հետո

սկսվում է համաձայնության գալու նոր շրջափուլ, մինչև որ չձևավորվի բոլորի համար ընդունելի որոշում:

4.6 Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիր և ժամանակացույց

Հավատարմագրման գործընթացի ամբողջականության տեսակետից՝ համաձայն Որակի ապահովման եվրոպական ուղենիշների ու չափանիշների՝ խիստ կարևոր է հաստատության կողմից հետագա բարելավման գործողությունների պլանավորումը և իրականացումը: Թերությունների վերացման գործողությունների ծրագիրը տրամաբանորեն ավարտուն է դարձնում գործընթացը, պլանավորվում են աշխատանքները մինչև հաջորդ հավատարմագրում, և հիմքեր են նախապատրաստվում հաջորդ հավատարմագրման համար: Այդ նպատակին է ծառայում Հավատարմագրման կարգով պահանջվող ուսումնական հաստատության կողմից մշակված «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը և դրա ժամանակացույցը» /այսուհետ՝ Ծրագիր/: Միաժամանակ Ծրագիրը ուսումնական հաստատության միջանկյալ հաշվետվությունների, հաջորդ ինքնավերլուծության և հավատարմագրման հիմք է:

Փորձագիտական զեկույցն ստանալուց հետո ուսումնական հաստատությունն անմիջապես ձեռնամուխ է լինում Ծրագրի կազմման աշխատանքներին: Ծրագիրը պետք է ուղղված լինի փորձագիտական զեկույցում վերհանված խնդիրների հաղթահարմանը և խորհրդատվությունների իրականացմանը: Գործողությունները պետք է կատարվեն հաստատության առաքելության և ընդհանուր ռազմավարության շրջանակներում և չխանգարեն նրա բնականոն աշխատանքին:

Կարգով սահմանված ժամկետներում Ծրագրի նախնական տարբերակն ինքնավերլուծության, փորձագիտական զեկույցի և պահանջվող այլ փաստաթղթերի հետ միասին ներկայացվում է Հավատարմագրման հանձնաժողովին՝ որոշում կայացնելու համար:

Ծրագիրը կազմվում է ըստ հավատարմագրման առանձին չափանիշների և ներկայացնում, թե հաստատությունը.

1) ինչպես է ընկալում չափանիշի սահմաններում բարձրացված խնդիրների էությունը,
2) ինչպիսի մոտեցումներ/ռազմավարություն կամ մեթոդներ է պատրաստվում կիրառել լուծման համար,
3) ինչպիսի նշանակալի արդյունքներ է ակնկալում դրանց լուծման շնորհիվ:

Ծրագիրը պետք է անդրադառնա մի քանի կարևոր հիմնադրույթների.

- փորձագիտական խմբի խորհրդատվությունը/վեր հանված խոշոր խնդիրը:
- ակնկալվող արդյունքը,
- նախատեսվող միջանկյալ արդյունքները (քանակական և/կամ որակական),
- տրամադրվող բյուջեն,
- միջանկյալ արդյունքների գնահատման/ստուգման ժամկետները,
- գնահատման պատասխանատու ստորաբաժանումը, արդյունքի պատասխանատու ստորաբաժանումը,
- գնահատման հաշվետվության ձևը,
- որտեղ հասանելի կլինի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը:

Ծրագիրն ուսումնասիրվում է արտաքին գնահատում իրականացրած փորձագիտական խմբի կողմից **բավարար** և **իրատեսական** լինելու տեսանկյունից՝ պատասխանելով հետևյալ հարցերին.

- արդյո՞ք հաստատության կողմից խնդիրները ճիշտ են ընկալվել,
- որքանո՞վ է ծրագիրն իրակնացման առումով իրատեսական:

Ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի կարծիքը տրամադրվում է Հավատարմագրման հանձնաժողովին:

Հավատարմագրման մասին որոշման կայացումից հետո 2 ամսվա ընթացքում հաստատությունը ՈԱԱԿ է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերջնական, վերանայված

ծրագիրը և ժամանակացույցը, որտեղ հաշվի են առնված Ծրագրի վերաբերյալ Հավատարմագրման հանձնաժողովի դիտողությունները և առաջարկությունները:

Հավատարմագրման վերաբերյալ որոշման կայացում

Հավատարմագրման հանձնաժողովի որոշման կայացման գործընթացը կանոնակարգվում է «Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով» և Հավատարմագրման հանձնաժողովի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացման քաղաքականությամբ:

5.1. ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողով

Հավատարմագրման հանձնաժողովն անկախ, կոլեգիալ, մշտական, գործող մարմին է, որն իրականացնում է «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ով և ՈԱԱԿ-ի «Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգ»-ով սահմանված լիազորությունները: Հանձնաժողովի անդամներ կարող են լինել այն անձինք, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երեքը.

- մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման քաղաքականության մշակման և իրականացման փորձ,
- կրթության որակի փորձաքննության անցկացման, արտաքին գնահատման փորձ,
- կրթության կառավարման և ղեկավարման փորձ ունեցող, ոչ գործող կառավարիչներ,
- առնվազն 10 տարվա դասավանդման փորձ,
- մասնագիտական կրթության ոլորտում կրթական ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման փորձ,
- կրթության ոլորտում միջազգային փորձ:

Հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործող ղեկավար անձինք (ռեկտոր, պրոռեկտոր, տնօրեն, փոխտնօրեն):

Հանձնաժողովի անդամների թեկնածություններն առաջադրում են մասնագիտական ուսումնական հաստատությունները, գործատուները և մասնագիտական միությունները, ինչպես նաև ՈԱԱԿ-ը:

Հավատարմագրման հանձնաժողովը ձևավորվում է ընտրության հստակ ընթացակարգով, ինչը և երաշխավորում է նրա գործառույթների օրինականությունը:

Հավատարմագրման հանձնաժողովը պատասխանատու է.

- հավատարմագրման մասին որոշումների կայացման մոտեցումների և սկզբունքների համար,
- ուսումնական հաստատության ինքնավերլուծության և փորձագիտական գնահատման արդյունքների հիման վրա ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման մասին որոշում կայացնելու համար,
- ՈԱԱԿ-ի հավատարմագրման գործընթացների և մեթոդաբանության որակն ապահովելու նպատակով ժամանակին արձագանքելու, առաջարկություններ ներկայացնելու համար:

Հավատարմագրման հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է օրինականության և անկախության սկզբունքների հիման վրա՝ առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 978-Ն և «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959-Ն որոշումներով, պետական կրթական չափորոշիչներով, ՈԱԱԿ-ի կանոնադրությամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով /նոր խմբագրությամբ/, «Մասնագիտական կրթության որակի ապահովման

ազգային կենտրոն» հիմնադրամի հավատագրման հանձնաժողովի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացման քաղաքականությամբ և ՈԱԱԿ-ի ներքին իրավական այլ ակտերով:

Հանձնաժողովն իր իրավասություններն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ տարին առնվազն չորս անգամ: Հավատարմագրման հանձնաժողովը որոշումները կայացնում է բաց քվեարկության միջոցով:

5.2. Հավատարմագրման մասին որոշումներ

Հանձնաժողովը հավատարմագրման վերաբերյալ որոշում կայացնելիս ծանոթանում է ուսումնական հաստատության հավատարմագրման գործընթացի փաստաթղթերի փաթեթին, որում ներառված են.

- հաստատության ինքնավերլուծությունը,
- փորձագիտական զեկույցը, որտեղ ներկայացված է ՄՈՒՀ-ի ուժեղ կողմերի և բարելավման կարիք ունեցող կետերի վերլուծությունը,
- փորձագիտական զեկույցի վերաբերյալ հաստատության դիտողությունները և առաջարկությունները,
- փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման հաստատության ներկայացրած ծրագիրը և ժամանակացույցը,
- ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի եզրակացությունը,
- ամփոփ եզրակացությունը, որը պատրաստվում է Հավատարմագրման հանձնաժողովի երեք անդամների (Դիտարկող համձնախումբ) կողմից, ովքեր մանրամասն ուսումնասիրում են փաստաթղթերը, հանդիպում են հավատարմագրման գործընթացի համակարգողի, փորձագիտական խմբի և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ, վերջնականացնում նրանց դիրքորոշումը և առարկությունները: Դիտարկող հանձնախմբի ամփոփ եզրակացությունը ներառում է հիմնավորված առաջարկ հավատարմագրման շնորհման և որոշման եզրակացության

վերաբերյալ:

Հավատարմագրման հանձնաժողովի նիստն իրավազոր է անդամների 2/3-րդի մասնակցության դեպքում:

Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ (կողմ կամ դեմ)՝ մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է: Հանձնաժողովի նիստին մասնակցում են նաև ՈԱԱԿ տնօրենը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, և քարտուղարը՝ առանց ձայնի իրավունքի:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Հավատարմագրման մասին որոշումների կայացման մոտեցումներն ու սկզբունքները, որոնք ամրագրված են «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատագրման հանձնաժողովի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացման քաղաքականության մեջ, ուսումնական հաստատության փորձաքննության փաստաթղթային փաթեթը, հանձնաժողովի անդամների ներկայացրած հիմնավորումները, ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

- **շնորհել ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրում,**
- **շնորհել պայմանական ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրում,**
- **մերժել ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրումը:**

Նիստի վերջում Հավատարմագրման հանձնաժողովի նախագահը հայտարարում է հավատարմագրման մասին կայացրած որոշումը:

5.3. Հավատարմագրման մասին որոշման հրապարակում

Ինստիտուցիոնալ հավատարմագրման դեպքում հաստատությանը տրվում է Հավատարմագրման վկայական, իսկ ծրագրային հավատարմագրման դեպքում՝ Հավատարմագրման վկայականի ներդիր:

ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովի ընդունած որոշումը և հավատարմագրման վկայականի կամ ներդիրի ձևաթուղթը՝ կախված հավատարմագրման տեսակից, ներկայացնում է ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ նախարարի հաստատմանը: Հավատարմագրման գործընթացի

ընթացակարգային խախտման (խախտումների) հայտնաբերման դեպքում փաստաթղթերը վերադարձվում են ՈԱԱԿ՝ կրկնակի քննարկման համար:

Խախտման (խախտումների) բացակայության դեպքում հավատարմագրման վկայականը կամ ներդիրը հաստատվում է նախարարի կողմից և հանձնվում ՈԱԱԿ-ին՝ հավատարմագրման պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու համար:

Գրանցամատյանում հրապարակվում են վերջնական փորձագիտական զեկույցը, ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման արդյունքների մասին Հավատարմագրման հանձնաժողովի որոշումը և հավատարմագրման վկայականը, ինչպես նաև տեղադրվում են ՈԱԱԿ-ի պաշտոնական կայքէջում:

Հավատարմագրման հանձնաժողովի կայացրած որոշման մասին հրապարակում է տարածվում ՈԱԱԿ-ի պաշտոնական կայքէջում: Հավատարմագրման արդյունքների մասին կարող են հրապարակումներ տարածվել զանգվածային լրատվության միջոցներում:

5.4 Գրանցում հավատարմագրման պետական գրանցամատյանում

Ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կարողությունները կամ մասնագիտության կրթական ծրագիրը համարվում են հավատարմագրված՝ հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից: Գրանցամատյանի նպատակն է հանրությանը և միջազգային կազմակերպություններին տեղեկատվություն տրամադրել հավատարմագրված ուսումնական հաստատությունների և մասնագիտության կրթական ծրագրերի վերաբերյալ:

Հավատարմագրման հաստատված վկայականը կամ ներդիրն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ՈԱԱԿ-ը հավատարմագրման պետական գրանցամատյանում կատարում է համապատասխան գրառում և վկայականը կամ ներդիրը պատշաճ հանձնում ուսումնական հաստատությանը: ՈԱԱԿ-ը հավատարմագրման մասին ընդունված որոշումը հրապարակում է իր կայքում:

Հավատարմագրման համար միջազգային կազմակերպություններին դիմելու և այդ մասին ՈԱԱԿ-ին չտեղեկացնելու դեպքում ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման արդյունքները չեն գրանցվում հավատարմագրման պետական գրանցամատյանում:

5.5. Հաշվետվություններ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի իրականացման վերաբերյալ

Հավատարմագրման կարգով նախատեսված է, որ հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունը 2 տարին մեկ անգամ պարտավոր է իրականացնել ինստիտուցիոնալ ներքին գնահատում: Ներքին գնահատում նշանակում է փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի իրականացման միջանկյալ գնահատում՝ ըստ հավատարմագրման չափանիշների: Գնահատումը կարող է իրականցվել ինչպես հաստատության ուժերով, այնպես էլ հրավիրված արտաքին փորձագետների միջոցով: Արդյունքները ներկայացվում են ՈԱԱԿ:

Հավատարմագրման մասին որոշման մեջ Հանձնաժողովն ընդգծում է հաստատության համար առաջնահերթ և անհետաձգելի բարելավման ոլորտները, որոնք պետք է հիմք հանդիսանան հաջորդ հավատարմագրման ինքնավերլուծության համար:

Պայմանական ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրում ստանալու պահից յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ ուսումնական հաստատությունն իրականացված բարելավման միջոցառումների մասին գրավոր հաշվետվություն է ներկայացնում ՈԱԱԿ-ին: Հաշվետվությունները պատրաստելիս հաստատությունները պետք է կարևորեն դրանց համապատասխանությունը փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրին և վերլուծեն իրականացված գործողությունների արդյունավետությունը:

ՈԱԱԿ-ը քննարկում է հաշվետվությունը և տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում իր գրավոր եզրակացությունն է ներկայացնում ուսումնական հաստատությանն ու հավատարմագրման Հանձնաժողովին:

5.6. Հավատարմագրված ուսումնական հաստատությունների մշտադիտարկումներ

Հավատարմագրված ուսումնական հաստատությունները ենթակա են մշտադիտարկման՝ ըստ ՈԱԱԿ-ի տարեկան պլան-ժամանակացույցի:

ՈԱԱԿ մշտադիտարկումներն իրականացվում են ուսումնական հաստատության գործունեության ընթացիկ դիտարկման և թերությունների վերացման ծրագրի իրականացման ընթացքի ուսումնասիրման նպատակով:

Մշտադիտարկումների անցկացման առանձնահատկությունները սահմանված են «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի մշտադիտարկումների քաղաքականությամբ և ընթացակարգով (հաստատված Հոգաբարձուների խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 6-Լ որոշմամբ):

5.7. Հավատարմագրման մերժման և պայմանական հավատարմագրման հետևանքները հաստատության համար

Հավատարմագրման մերժումը կամ պայմանական հավատարմագրման շնորհումը հանգեցնում են Հավատարմագրման կարգով սահմանված որոշակի հետևանքների՝ ուսումնական հաստատությունների համար:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը մերժելու դեպքում հաջորդ ուսումնական տարվանից մինչև ինստիտուցիոնալ հավատարմագրում ստանալը **դադարեցվում է** պետության կողմից ուսումնական հաստատությանը հատկացվող ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) **բոլոր կրթական աստիճանների տեղերի**, ինչպես նաև **գիտական** և **գիտատեխնիկական գործունեության** պայմանագրային (թեմատիկ) **ֆինանսավորումը**:

Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունը **չի կարող դիմել ծրագրային հավատարմագրման** գործընթացին մասնակցելու համար և **բացել նոր մասնագիտություն**:

Ծրագրային հավատարմագրումը մերժելու դեպքում հաջորդ ուսումնական տարվանից մինչև ծրագրային հավատարմագրում ստանալը **դադարեցվում է** ուսումնական հաստատությանը **տվյալ կրթական ծրագրով** պետության կողմից հատկացվող ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի ֆինանսավորումը:

Եթե **մերժվել է բակալավրի կրթական ծրագրի** հավատարմագրումը, ապա հաջորդ ուսումնական տարուց մինչև ծրագրային հավատարմագրում ստանալը **դադարեցվում է** ուսումնական հաստատությանը **տվյալ կրթական ծրագրով** պետության կողմից հատկացվող ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի ֆինանսավորումը **բոլոր կրթական աստիճաններում**:

5.8. Հավատարմագրման մասին որոշման բողոքարկում

Հավատարմագրման կարգի համաձայն՝ ուսումնական հաստատություններն ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման մասին Հավատարմագրման հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկել: Հավատարմագրման վերաբերյալ որոշման հրապարակումից հետո՝ մեկամսյա ժամկետում, ըստ ՈԱԱԿ-ի մշակած դիմում-բողոքի ձևաչափի՝ հաստատությունը կարող է գրավոր բողոքարկել: Դիմում-բողոքն էլեկտրոնային կամ թղթային եղանակով ներկայացվում է ՈԱԱԿ քարտուղարություն:

ՈԱԱԿ քարտուղարությունը դիմում-բողոքն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է այն ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհուրդ կամ ետ է վերադարձնում, եթե.

- դիմում-բողոքն ստորագրված չէ բողոք բերող անձի կամ ներկայացուցչի կողմից,
- նշված չէ մարմնի անվանումը, որին ներկայացվում է բողոքը,
- բացակայում է բողոքը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը,
- դիմում-բողոքը ստորագրված է դրա լիազորությունը չունեցող անձի կողմից, կամ լիազորված անձը դիմում-բողոքին չի կցել համապատասխան լիազորագիր,

- խախտվել են դիմում-բողոքը ներկայացնելու ժամկետները:

Հոգաբարձուների խորհրդը ՈԱԱԿ տնօրենի առաջարկությամբ ձևավորում է երեք անդամից բաղկացած Բողոքարկման հանձնախումբ՝ դիմում-բողոքները քննելու և եզրակացություն տալու նպատակով:

Հոգաբարձուների խորհրդի կողմից ընդունված դիմում-բողոքը քարտուղարությունը ներկայացնում է Բողոքարկման հանձնախմբին, որն իրեն հասցեագրված Հավատարմագրման հաձնաժողովի որոշման դեմ բողոքն ուսումնասիրում է և տալիս եզրակացություն մեկամսյա ժամկետում:

Հիմք ընդունելով դիմում-բողոքը, հաստատության ինքնավերլուծությունը, փորձագիտական խմբի զեկույցի նախնական տարբերակը, հաստատության համաձայնությունը կամ դիտողություններն ու առարկությունները զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ (դրանց առկայության դեպքում), վերջնական զեկույցը, Հավատարմագրման հանձնաժողովի որոշումը, դիմում-բողոքի ուսումնասիրության ընթացքում կողմերի ներկայացրած լրացուցիչ փաստարկները, հայտարարությունները, այդ թվում՝ նոր երևան եկած հանգամանքները՝ Հանձնախումբը համաձայնեցման /կոնսենսուսի/ սկզբունքով տալիս է հետևյալ եզրակացություններից մեկը.

- թողնել Հանձնաժողովի որոշումն անփոփոխ՝ մերժելով դիմողի բողոքը,
- ետ ուղարկել՝ Հանձնաժողովի կողմից նոր որոշում կայացնելու առաջարկությամբ:

Հանձնախմբի անդամների վարձատրության ծախսերը կրում է բողոքարկող կողմը:

Հանձնախմբի քարտուղարի գործառույթներն իրականացնում է ՈԱԱԿ-ի քարտուղարությունը: Ուսումնասիրության ընթացքը ձայնագրվում և արձանագրվում է: Արձանագրությունները ստորագրվում են Հանձնախմբի անդամների և քարտուղարի կողմից:

Հանձնախմբի եզրակացությունը ներկայացվում է Հոգաբարձուների խորհրդին:

Բողոքը բավարարելու դեպքում Հանձնախմբի եզրակացությունն ուղարկվում է Հավատարմագրման հանձնաժողովին՝ նոր որոշում կայացնելու առաջարկությամբ:

Հանձնախմբի եզրակացությունը չի կարող կրկին բողոքարկվել ՈԱԱԿ-ին:

5.9. Պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելը

Հավատարմագրման կարգով սահմանված են այն դեպքերը, երբ ՈԱԱԿ-ը որոշում է կայացնում պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին: Դա կարող է տեղի ունենալ, եթե.

1) լրացել է ուսումնական հաստատությանը շնորհված հավատարմագրի վավերականության ժամկետը,
2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցվել է հաստատության գործունեությունը,
3) ուժը կորցրած է ճանաչվել կրթական ծառայություններ մատուցելու հաստատության լիցենզիան:

ՈԱԱԿ-ը հրապարակում է պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը և համապատասխան գրառում կատարում հավատարմագրման պետական գրանցամատյանում:

V.ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ, ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

Որակի արտաքին ապահովման՝ հավատարմագրման, գործընթացների իրականացման համար ՈԱԱԿ-ն օգտվում է բարձրակարգ փորձագետների ծառայություններից, որոնք իրականացնում են նախնական ուսումնասիրություններ, կատարում են այցեր ուսումնական հաստատություններ և փորձաքննության արդյունքների հիման վրա ներկայացնում փորձագիտական զեկույց:

Արտաքին փորձագետների ընտրությունը հավատարմագրման գործընթացի կարևորագույն խնդիրներից է, քանի որ մասնագիտական կրթության շահակիցների կողմից հավատարմագրման որոշումների ճանաչումը մեծապես կախված է թե՛ արտաքին փորձագետների ընտրության չափանիշների պահպանումից, թե՛ սահմանված ընթացակարգերի իրականացումից: «Հավատարմագրման եվրոպական կոնսորցիում»-ն (ՀԵԿ) առանձնացրել է փորձագետների ընտրության հետևյալ սկզբունքները (2005թ.).

- Փորձագիտական խմբի ձևավորման վերաբերյալ ցանկացած որոշում հիմնվում է հավատարմագրում իրականացնող կառույցի սահմանած կարգերի, ընթացակարգերի և համապատասխան օրենսդրական ակտերի վրա: Փորձագետների ընտրությունը պետք է լինի թափանցիկ:
- Հավատարմագրման ենթակա ուսումնական հաստատությունները կարող են ներկայացնել իրենց առարկությունները փորձագետների ընտրության վերաբերյալ:
- Հավատարմագրման մասին որոշումները կայացվում են ոչ թե փորձագիտական խմբերի, այլ հավատարմագրում իրականացնող կառույցի կողմից:
- Փորձագետները պետք է լինեն անկախ և կատարեն անկողմնակալ դատողություններ:

- Փորձագետները պետք է աշխատեն միասին և իրականացնեն հավատարմագրման նպատակին համապատասխան փորձաքննություն:

ՈԱԱԿ-ի փորձագետների ընտրության չափանիշները և համապատասխան գործընթացները համահունչ են Եվրոպական կոնսորցիումի սահմանած չափորոշիչներին:

Փորձագիտական խմբում ընդգրկվող բոլոր մասնագետները և ուսանողներն ընտրվում են ՈԱԱԿ-ի կողմից մշակված և Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված հստակ ընթացակարգի միջոցով: Խմբերը ձևավորվում են մասնագիտական բարձր որակներ ունեցող, տեղացի և միջազգային անվանի, փորձառու մասնագետներից, որոնք տիրապետում են որակի ապահովման գործընթացներ իրականացնելու որոշակի հմտությունների: Փորձագետներն ընտրվում են՝ հաշվի առնելով նրանց գրավոր և բանավոր հաղորդակցվելու, հանդիպումներ, ֆոկուս խմբային քննարկումներ վարելու, մեծ քանակությամբ տեղեկատվություն վերլուծելու կարողությունները, ինչպես նաև անձնային այնպիսի հատկությունները, որոնք թույլ կտան ապահովել անկողմնակալ և օբյեկտիվ գնահատում:

ՈԱԱԿ-ն իրականացնում է փորձագիտական խմբի անդամների վերապատրաստումներ՝ վերոնշյալ հմտությունները և կարողությունները հավատարմագրման գործընթացում արդյունավետ կիրառելու համար:

ՈԱԱԿ-ի պաշտոնական կայքէջի միջոցով հանրությանը հասանելի են փորձագետների հավաքագրման, ընտրության, վերապատրաստման և զարգացման քաղաքականությունը, ինչպես նաև փորձագետների ընտրության և փորձագիտական խմբերի ձևավորման կարգերը:

2017 թ. ՈԱԱԿ-ն ամբողջությամբ վերանայել և կատարելագործել է փորձագետների էլեկտրոնային շտեմարանը: ՈԱԱԿ փորձագետ դառնալու համար անհրաժեշտ է փորձագետների նախնական շտեմարանում գրանցվելը: Փորձագիտական շտեմարանում գրանցվելու համար ՈԱԱԿ-ի կայքէջում հրապարակվել է գրանցման ուղեցույցը: Փորձագետների շտեմարանը պարունակում է ՈԱԱԿ հավատարմագրման գործընթացներում մասնակցած և գրանցված փորձագետների վերաբերյալ տվյալներ:

Գրանցամատյանում գրանցվելը դյուրացնում է ՈԱԱԿ-ի կողմից փորձագետների հավաքագրման գործընթացը:

ՈԱԱԿ-ը երաշխավորում է հավատարմագրման ենթակա ուսումնական հաստատությանը, որ արտաքին գնահատման գործընթացները կլինեն օգտակար և արդյունավետ՝

- վստահեցնելով, որ գնահատում իրականացնող խմբի անդամներն անցել են համապատասխան վերապատրաստումներ՝ աշխատանքներն արհեստավարժ իրականացնելու համար,
- ապահովելով ուսումնասիրության և գնահատման միևնույն մեթոդների հետևողական կիրառումը բոլոր հաստատությունների համար,
- ապահովելով հաստատությանը տրված գնահատման արդյունքների հստակ և հասկանալի լինելը:

1. Փորձագիտական խմբի ձևավորում

1.1 Փորձագետներին ներկայացվող պահանջներ

Հավատարմագրման նպատակից ելնելով՝ ՈԱԱԿ-ը ձևավորում է երկու տեսակի փորձագիտական խմբեր՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման համար:

Փորձագիտական խմբերը ձևավորվում են հետևյալ սկզբունքով.

1. պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից,
2. կրթության կառավարման ոլորտի ներկայացուցիչներից,
3. միջազգային փորձագետ,
4. ուսանող,
5. մասնագիտական կամ տնտեսության տվյալ ոլորտի ներկայացուցիչներից / գործատուներից (ծրագրային հավատարմագրման դեպքում):

Միջազգային փորձագետն ընտրվում է որակի ապահովման միջազգային հեղինակավոր որևէ կազմակերպության կամ ՈԱԱԿ-ի փորձագետների բազայից:

ՈԱԱԿ փորձագետ դառնալու համար հարկավոր է.

1. Գրանցվել փորձագետների նախնական բազայում,
2. ՈԱԱԿ-ի կողմից թույլտվություն ստանալուց հետո լրացնել փորձագետի վերաբերյալ տվյալների հարցաշարը,
3. Մասնակցել փորձագետների համար կազմակերպվող դասընթացներին ու վերապատրաստումներին:

Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները պետք է ունենան.

- ինստիտուցիոնալ կամ մասնագիտության կրթական ծրագրերի գնահատման կամ փորձաքննության փորձառություն,
- համապատասխան մասնագիտական ոլորտում ծավալած գործունեության փորձառություն,
- փորձաքննության կամ կրթության որակի գնահատման փորձ,
- կրթության կառավարման փորձ (ցանկալի է),
- դասավանդման, հետազոտության կամ գնահատման միջազգային փորձ,
- ծրագրերի մշակման և մշտադիտարկման, մեթոդաբանության և փորձաքննության փորձ,
- մասնակցություն հավատարմագրման կամ փորձաքննության անցկացման վերաբերյալ վերապատրաստումներին:

Կրթության կառավարման ոլորտի ներկայացուցիչները պետք է ունենան.

- մասնագիտական փորձաքննության իրականացման փորձ,
- քաղաքականության և ընթացակարգերի մշակման փորձ,
- միջազգային համագործակցության փորձ,
- հավատարմագրման կամ փորձաքննության անցկացման վերաբերյալ վերապատրաստումներին մասնակցություն:

Փորձագիտական խմբերում ընդգրկվում են ուսանողներ, ովքեր.

- սովորում են բակալավրիատի բարձր կուրսերում կամ մագիստրատուրայում և ունեն հասարակական գործունեության փորձ,

- մասնակցել են հավատարմագրման կամ փորձաքննության անցկացման վերաբերյալ վերապատրաստումներին:

Մասնագիտական կամ տնտեսության տվյալ ոլորտի ներկայացուցիչները/գործատուները պետք է ունենան.

- մասնագիտական փորձաքննության իրականացման փորձ,
- աշխատանքի ընդունելու և շրջանավարտների հետ աշխատելու փորձ (մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտ),
- հավատարմագրման կամ կրթության որակի գնահատման փորձ,
- հաստատության կառավարման փորձ (ցանկալի է),
- մասնակցություն հավատարմագրման կամ փորձաքննության անցկացման վերաբերյալ վերապատրաստումներին:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների փորձագետների համար գիտական աստիճանի և գիտական կոչումի, իսկ միջին մասնագիտական հաստատությունների համար՝ առնվազն մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանի առկայությունը պարտադիր է:

Լեզվի իմացություն: Տեղացի փորձագետները պետք է ունենան հայերենի (գրավոր և բանավոր) գերազանց իմացություն: Փորձագիտական խմբի տեղացի անդամներից առնվազն մեկը պետք է տիրապետի անգլերենին:

Փորձագետները պետք է ունենան նաև **ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների կիրառման հմտություններ և գիտելիքներ**.

- ՈԱԵՉՈՒ-ի վերաբերյալ գիտելիքներ և դրանց կիրառման հմտություններ,
- ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների, չափորոշիչների, ընթացակարգերի և դրանց գործառման վերաբերյալ խորը գիտելիքներ,
- ՈԱԱԿ-ի գնահատման մեթոդների վերաբերյալ խորը գիտելիքներ,

- իրավիճակներից կախված՝ հավատարմագրման չափանիշների ճիշտ մեկնաբանության և կիրառման հմտություններ:

1.2. Փորձագետի անձնային հատկանիշներ

Փորձագետը պետք է.

- լինի պատրաստակամ՝ ընդունելու տարբեր գաղափարներ և տեսակետներ,
- ունենա հստակ դատողություններ կատարելու կարողություն, վերլուծական հմտություններ,
- ունենա տարբեր իրավիճակներին իրատեսական գնահատական տալու ունակություն՝ հասկանալով բարդ գործառույթները և ՄՈՒՀ-ի բաղկացուցիչ միավորների դերը,
- ունակ լինի տարբերակել առավել կարևոր դրույթները նվազ կարևորներից,
- լինի արդար, անկեղծ, ազնիվ և խոհեմ,
- լինի հաղորդակցական. կարողանա նրբանկատ հաղորդակցվել մարդկանց հետ,
- լինի ուշադիր և քաջատեղյակ շրջապատում կատարվող գործողությունների և սովորույթների վերաբերյալ,
- կարողանա կայացնել որոշումներ, կատարել խոհեմ եզրակացություններ և վերլուծություններ,
- լինի վստահ իր ուժերի վրա, գործի անկախ՝ արդյունավետ համագործակցելով մյուսների հետ:

Փորձագետները պետք է ունենան վերոնշյալ հատկությունները, որպեսզի.

- կարողանան հավաքել հավաստի տվյալներ և հիմքեր,
- մնան հավատարիմ գնահատման նպատակներին,
- իրականացնեն գնահատման գործընթացն առանց շեղումների,
- ճիշտ արձագանքեն լարված իրավիճակներին,

- հանգեն խմբի բոլոր անդամների կողմից ընդունելի եզրակացությունների՝ հիմնվելով գնահատման ընթացքում հավաքագրված հավաստի տեղեկատվության վրա,
- հավատարիմ մնան իրենց եզրակացություններին, եթե նույնիսկ իրենց վրա ճնշում է գործադրվում փոխելու այդ եզրակացությունները՝ առանց օբյեկտիվ հիմնավորումների:

2. Փորձագիտական խմբի գործառույթները

Փորձագիտական խումբն իրականացնում է փորձաքննություն՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների, Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի պահանջների և հավատարմագրման գործընթացների ընթացակարգային կարգավորման սկզբունքների վրա:

Փորձագիտական խմբի գործառույթներն են.

- ուսումնասիրել և գնահատել ուսումնական հաստատության ներկայացրած ինքնավերլուծությունը և կից փաստաթղթերի փաթեթը,
- իրականացնել փորձագիտական այց,
- ուսումնասիրել փաստաթղթերի և գործընթացների համապատասխանությունը ներկայացվող պահանջներին,
- պատրաստել փորձագիտական վերջնական զեկույց՝ հիմնվելով ներկայացված ինքնավերլուծության նախնական գնահատման և փաստաթղթերի ուսումնասիրությունների, ինչպես նաև փորձագիտական այցի արդյունքների վրա,
- ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական վերջնական զեկույց,
- ՈԱԱԿ Հավատարմագրման հանձնաժողովի պահանջով տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, հանդիպել Հանձնաժողովի նախագահի կողմից կազմված, 3 հոգուց բաղկացած հանձնաժողովի անդամների հետ՝ փաստական հանգամանքներ ներկայացնելու

համար,

- Տալ կարծիք ուսումնական հաստատության ներկայացրած «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի» վերաբերյալ:

3. Փորձագիտական խմբի պարտականություններ

Փորձագիտական խմբում աշխատանքների և պատասխանատվությունների ճիշտ բաշխումը երաշխավորելու նպատակով՝ խմբի անդամներից մեկն ընտրվում է խմբի ղեկավար:

Ստորև հակիրճ ներկայացված են փորձագիտական խմբի անդամների, ղեկավարի, ինչպես նաև համակարգողի դերերն ու պարտականությունները:

3.1. Փորձագիտական խմբի անդամի պարտականություններ

Փորձագիտական խմբի անդամը պարտավոր է.

- իրականացնել հաստատության ինքնավերլուծության և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն,
- պատրաստել ուսումնական հաստատության կողմից ներկայացված ինքնավերլուծության նախնական գնահատական՝ ըստ ՈԱԱԿ-ի ձևաչափի,
- մասնակցել ինքնավերլուծության վերաբերյալ փորձագետների նախնական գնահատականների քննարկմանը,
- մասնակցել ուսումնական հաստատության ինքնավերլուծությունից վեր հանված խնդիրների քննարկմանը և այցի պլանի կազմմանը,
- կատարել փորձագիտական այց, մասնակցել փորձագիտական այցի բոլոր հանդիպումներին, փակ քննարկումներին և որոշումների կայացման գործընթացին,
- այցի ընթացքում ներկայացնել խմբի ղեկավարի և համակարգողի կողմից իրեն հանձնարարված հարցադրումները,
- մասնակցել փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի պատրաստմանը,

- մասնակցել զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից ներկայացրած դիտողությունների և առաջարկությունների քննարկմանը,
- մասնակցել փորձագիտական վերջնական զեկույցի պատրաստմանը,
- մասնակցել փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա ուսումնական հաստատության՝ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի գնահատման աշխատանքներին և տալ կարծիք՝ ըստ ՈԱԱԿ-ի ձևաչափի,
- հանդիպել Հանձնաժողովի նախագահի կողմից կազմված, 3 հոգուց բաղկացած հանձնաժողովի անդամների հետ՝ փաստական հանգամանքներ ներկայացնելու համար:

3.2. Փորձագիտական խմբի ղեկավարի պարտականություններ

Փորձագիտական խմբի ղեկավարը կազմակերպում և ղեկավարում է փորձաքննության ողջ գործընթացը: Նա պատասխանատվություն է կրում փորձագիտական խմբի աշխատանքների մեթոդաբանության և որակի համար:

Խմբի ղեկավարը պարտավոր է.

- կազմակերպել փորձագետների քննարկում,
- իրականացնել ուսումնական հաստատության կողմից ներկայացված ինքնավերլուծության նախնական գնահատում,
- այցի պլանի համաձայնեցման նպատակով ՈԱԱԿ-ի համակարգողի հետ կատարել նախապատրաստական այց ուսումնական հաստատություն,
- ղեկավարել փորձագիտական այցի բոլոր հանդիպումները, փակ քննարկումները և որոշումների կայացման գործընթացները,
- հետևել ժամանակացույցին, պահպանել աշխատակարգը (հետևել հանդիպումների տևողությանը, փորձագետների կողմից նախատեսված բոլոր հարցերի ներկայացմանը և դրանց պարզաբանմանը),

- փորձագետների միջև կատարել աշխատանքների բաշխում և տալ հանձնարարականներ,
- իրականացնել կազմակերպչական աշխատանքներ,
- փորձագիտական խմբի օժանդակությամբ պատրաստել փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը,
- կազմակերպել փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից ներկայացված դիտողությունների ու առաջարկությունների քննարկում և խմբի օժանդակությամբ պատրաստել փորձագիտական վերջնական զեկույց,
- կազմակերպել փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա թերությունների վերացման՝ ՄՈՒՀ–իկազմած ծրագրի գնահատման աշխատանքները և տալ կարծիք՝ ըստ ՈԱԱԿ-ի ձևաչափի,
- հանդիպել Հանձնաժողովի նախագահի կողմից կազմված, 3 հոգուց բաղկացած հանձնաժողովի անդամների հետ՝ փաստական հանգամանքներ ներկայացնելու համար:

Փորձագետներին չի թույլատրվում փորձագիտական այցի հանդիպումների ժամանակ ներկայացնել իրենց տպավորությունները, համեմատություններ անել կամ ինքնուրույն բացահայտումներ անել: Փորձագետները չպետք է նաև օգտագործեն հետևյալ տերմինները՝ բավարար, անբավարար, լավ կամ վատ:

3.3. Համակարգողի պարտականություններ

Համակարգողն ապահովում է փորձագիտական խմբի ու մասնագիտական ուսումնական հաստատության միջև կապը և հավատարմագրման մեթոդաբանության պահպանման երաշխավորն է: Համակարգողը փորձագիտական խմբի անդամ չէ, չի տալիս գնահատականներ, չի կատարում դատողություններ հաստատության գործունեության կամ մասնագիտության կրթական ծրագրի վերաբերյալ:

Համակարգողը պարտավոր է.

- հետևել գործընթացների սահուն ընթացքին և արդյունավետ իրականացմանը (քննարկումների կազմակերպում, տարընկալումների հարթում),
- համակարգել ողջ գործընթացը և պաշտպանել փորձագիտական խմբի անդամների իրավունքները,
- կատարել իրավիճակի վերլուծություն, չպլանավորված դեպքերում որոշումներ կայացնել և լուծումներ տալ,
- փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել այցի ժամանակացույցի նախագիծը և համաձայնեցնել ուսումնական հաստատության հետ,
- կազմակերպել նախնական այցն ուսումնական հաստատություն, ստուգել ուսումնական հաստատության պատրաստվածությունը փորձագիտական այցին (տրամադրվող աշխատասենյակ, տեխնիկա և այլն),
- ուսումնական հաստատության գործընթացի համար պատասխանատու անձի հետ համատեղ ապահովել այցի՝ պլանով նախատեսված բոլոր հանդիպումները,
- օժանդակել փորձագիտական խմբին փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի պատրաստման գործընթացում,
- կազմակերպել ուսումնական հաստատության ներկայացրած դիտողությունների ու առարկությունների քննարկումներ փորձագիտական խմբի անդամների, ինչպես նաև ուսումնական հաստատության և խմբի հետ:
- օժանդակել փորձագիտական խմբին փորձագիտական վերջնական զեկույցի պատրաստման գործընթացում,
- հաստատությանը տրամադրել խորհրդատվություն զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի կազմման վերաբերյալ և կազմակերպել փորձագիտական խմբի կողմից այդ ծրագրի գնահատումը,

- կազմակերպել և մասնակցել 3 հոգուց բաղկացած Հավատարմագրման հանձնաժողովի անդամների հանդիպումների փորձագիտական խմբի և ՄՈՒՀ–երի ներկայացուցիչների,
- ապահովել փորձագիտական խմբի աշխատանքների և իրականացվող գործընթացների որակը:

Հատուկ դեպքերում ինստիտուցիոնալ հավատարմագրման ժամանակ հնարավոր է, որ գործընթացը համակարգեն միաժամանակ երկու համակարգող:

Փորձագիտական այցի ավարտին համակարգողը պետք է ունենա այն հիմնական փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ կլինեն վերջնական զեկույցի պատրաստման ժամանակ: Համակարգողը պետք է ունենա նաև բոլոր փորձագետների նշումները:

4. Փորձագետների հավաքագրում, ընտրություն և վերապատրաստում

Հուսալի և արհեստավարժ փորձագետներ հավաքագրելու նպատակով ՈԱԱԿ-ն առաջնորդվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագետների ընտրության կարգով, որտեղ նկարագրված են փորձագետներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև փորձագետների թեկնածուների առաջադրման և ընտրության ընթացակարգը:

Փորձագետների տվյալների բազայում գրանցվելու համար պետք է մուտք գործել http://forms.anqa.am կայք և գրանցվել: Բազայում գրանցման համար մշակված է ուղեցույց (http://www.anqa.am/media/2244/help-guide.pdf):

Փորձագետների տվյալների բազայում սխալ տեղեկատվություն ներկայացրած փորձագետի թեկնածուն չի ներգրավվում հավատարմագրման գործընթացներում:

Փորձագետների տվյալների բազայում ընդգրկված մասնագետների համար ՈԱԱԿ-ը պարբերաբար իրականացնում է վերապատրաստումներ:

Վերապատրաստումները պլանավորվում են կարիքի գնահատման հիման վրա և ըստ ոլորտների: Վերապատրաստման համար փորձագետների հավաքագրման ձևերն են.

- ՈԱԱԿ-ի փորձագիտական բազայում գրանցվածներ /ընդգրկվում են ըստ որակավորման/,
- ՄՈՒՀ-երի ինքնավերլուծության խմբերում ներգրավված աշխատակիցներ,
- հավատարմագրման գործընթացներին մասնակցած փորձագետների երաշխավորությամբ մասնագետներ,
- ՄՈՒՀ-երի ՈԱ ղեկավարների երաշխավորությամբ հրավիրյալ մասնակիցներ,
- ՈԱԱԿ-ում կազմակերպվող կլոր սեղանների (թեմատիկ, ոլորտային) անցկացման արդյունքում ընտրվող մասնակիցներ,
- իրենց դասավանդման փորձը հետազոտող և դրա վերաբերյալ հոդվածներ հրապարակած դասախոսներ,
- գիտության ոլորտում հայտնի մասնագետներ,
- ՄՈՒՀ-երի հետ ակտիվ համագործակցող գործատուներ,
- այլ աղբյուրներից:

Փորձագետների տվյալների բազան ընդլայնելու նպատակով ՈԱԱԿ-ն իր կայքում և սոցիալական ցանցերում պարբերաբար տարածում է հայտարարություններ: Տեղեկատվությունը տրամադրվում է նաև ՄՈՒՀ-երի տարբեր ստորաբաժանումներին: ՈԱԱԿ-ը տարբեր համաժողովների և ֆորումների ընթացքում ներկայացնում և տարածում է փորձագետների տվյալների բազայի մասին տեղեկատվությունը:

ՈԱԱԿ-ը փորձագետների համար կազմակերպում է տարեկան 3-5 վերապատրաստման դասընթաց:

Վերապատրաստման ծրագիրը ներառում է դերային խաղ, որոնց ընթացքում վերապատրաստվողներն հնարավորություն ունեն ծանոթանալու իրական ինքնավերլուծության զեկույցի հետ (առանց հաստատության անվանման), պատրաստելու հարցեր և իրականացնելու փորձագիտական այց՝ հանդես գալով որպես փորձագիտական խումբ և հարցեր հղելով ուսանողներին, դասախոսներին: Դերային խաղին մասնակցում են հավատարմագրման գործընթացների համակարգողները և «Ուսանողության ձայն» նախագծի ուսանողները:

Այս մեխանիզմն օգնում է վերապատրաստվողներին իրական միջավայրում ծանոթանալու փորձագիտական աշխատանքների առանձնահատկություններին:

Վերապատրաստումների ժամանակ հավանական փորձագետները ներկայացնում են նաև լավ փորձի օրինակ այն մասին, թե ինչպես են իրենք իրականացնում ՄԿԾ-ների և դասընթացների որակի ապահովում: ՈԱԱԿ-ի համակարգողները ուսումնասիրում են լավ փորձը և պատրաստում հարցեր քննարկման համար:

Միևնույն ժամանակ, ապագա փորձագետները զարգացնում են թիմային աշխատանքի կարողությունը, որն օգտակար է հավատարմագրում իրականացնող փորձագիտական խմբերի համար:

Վերապատրաստումներն ավարտվում են յուրաքանչյուր մասնակցի կատարած աշխատանքների վերաբերյալ տրված արձագանքներով:

Համակարգողները գնահատում են փորձագետների կարողությունները՝ համաձայն սանդղակի: Սանդղակը ներառում է այնպիսի կետեր, ինչպիսիք են.

- նորարարական գիտելիքներ ՄԿԾ-ների որակի ապահովման վերաբերյալ,
- զեկույց գրելու հմտություններ,
- հարցերի հղելու կարողություն,
- թիմային աշխատանքի կարողություն,
- և այլն:

Վերապատրասման մասնակիցները, որոնք դրական են գնահատվում կետերի գերակշիռ մասով, ներառվում են վերապատրաստված փորձագետների տվյալների բազայում:

ՈԱԱԿ-ը պարտադիր է համարում այն, որ փորձագետները շարունակաբար մասնակցեն պարբերաբար անցկացվող վերապատրաստումներին՝իրենց կարողություններն անընդհատ զարգացնելու համար:

Մինչև փորձագիտական խմբում ընդգրկվելը յուրաքանչյուր փորձագետ պարտավոր է ՈԱԱԿ-ին գրավոր տեղեկացնել տվյալ ուսումնական

հաստատության հետ շահերի բախմանը հանգեցնող ցանկացած խնդրի մասին և ստորագրել շահերի բախումը բացառող հավաստագիր:

Փորձագիտական խմբում ընդգրկվելուց հետո պետք է ստորագրել գաղտնիության և անկողմնակալության մասին պարտավորագիրը:

5. Փորձագիտական աշխատանքների մշտադիտարկում և գնահատում

ՈԱԱԿ-ը կարևորում է փորձագետների աշխատանքների գնահատման պատշաճ իրականացումը: Հավատարմագրման գործընթացների հաջող ընթացքն ապահովելու համար պարբերաբար իրականացվում են մշտադիտարկումներ և գնահատվում են փորձագիտական խմբի աշխատանքները: ՈԱԱԿ-ն ունի հստակ մշակված ընթացակարգեր փորձագետների աշխատանքների մշտադիտարկման ու գնահատման համար:

Նոր փորձագետների աշխատանքները մշտադիտարկվում և գնահատվում են ՈԱԱԿ-ի աշխատակազմի կողմից:

5.1 Շարունակական գնահատման և մշտադիտարկման եղանակներ

ՈԱԱԿ-ն իրականացնում է փորձագետների ընթացիկ աշխատանքների մշտադիտարկում հետևյալ ձևերով.

- **Փորձագիտական աշխատանքի մշտադիտարկում.** ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման պատասխանատուն կամ հավատարմագրման տվյալ գործընթացի մշտադիտարկողը փորձագիտական այցի ժամանակ ուսումնասիրում և հաշվետվություն է կազմում փորձագետների աշխատանքների վերաբերյալ՝ ներկայացնելով դիտողություններ և խորհրդատվություն բարելավման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու համար:
- **Փորձագետների հաշվետվությունների ուսումնասիրություն.** ՈԱԱԿ-ի համակարգողները և անձնակազմը տարբեր տեսանկյուններից ուսումնասիրում են փորձագետների հաշվետվությունները և նրանց կողմից լրացված փաստաթղթերը (ինչպես օրինակ՝ նախնական գնահատման ձևաչափերը, այցերի

ընթացքում ձեռք բերված հիմքերը և այլն), որպեսզի համոզվեն, որ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը և շարադրանքի հստակությունը ապահովված են: Նման գնահատումները հաճախակի են իրականացվում և ծառայում են որպես միջոց՝ փորձագետների հետ հետադարձ կապն ապահովելու համար:

- **Կարծիքների հավաքագրում ուսումնական հաստատություններից.** հաստատություններից գրավոր կամ բանավոր կարծիքների հավաքագրումը փորձագետների աշխատանքների գնահատման կարևոր միջոցներից մեկն է: Փորձագիտական այցի պլանով նախատեսված բոլոր հանդիպումներից հետո հավատարմագրման գործընթացի մասնակից ուսումնական հաստատության ներկայացուցիչները հարցաշար են լրացնում, որով գնահատում են փորձագիտական խմբի աշխատանքը: Այդ գնահատումների արդյունքների վերլուծությունները հիմք են ծառայում այցի ժամանակ փորձագետների աշխատանքի գնահատման և հետագա բարելավման համար:
- **Խմբի անդամների կարծիքների հավաքագրում.** գործընկեր փորձագետներից գրավոր կամ բանավոր արձագանքների հավաքագրումը ևս կարևոր միջոց է փորձագետի աշխատանքի գնահատման համար: Դա հնարավոր է դարձնում փորձագետի մասին ամբողջական գնահատական ունենալը, քանի որ տվյալ դեպքում տարբեր կարծիքներ են դիտարկվում:
- **Չնախատեսված դիտարկում.** այսպիսի դիտարկում տեղի է ունենում փորձաքննության իրականացման ժամանակ կամ այլ իրավիճակներում (ինչպես օրինակ՝ խմբային հանդիպումների, վերապատրաստումների ընթացքում), որտեղ կարելի է դիտարկել փորձագետի գնահատման հմտությունները կամ անձնային հատկանիշները:

6. Շահերի բախում, գաղտնիություն և ազնվություն

2015 թ. ՈԱԱԿ-ի Հոգոբարձուների խորհուրդը հաստատել է ՈԱԱԿ էթիկայի և վարքագծի կանոնները, որտեղ ամրագրված են փորձագետի էթիկայի և վարվելակերպի առանձնահատկությունները հավատարմագրման գործընթացի ժամանակ:

Նախքան հաստատության վերաբերյալ նյութերի ուսումնասիրությունը և գնահատում իրականացնելը, փորձագետը պետք է ՈԱԱԿ-ին գրավոր տեղեկացնի տվյալ ուսումնական հաստատության հետ շահերի բախմանը հանգեցնող ցանկացած խնդրի վերաբերյալ և ստորագրի շահերի բախումը բացառող հայտարարագիր:

Հավատարմագրման գործընթացներում ներգրավված փորձագետների համար ՈԱԱԿ-ը մշակել է շահերի բախումից խուսափելու հստակ քաղաքականություն: Շահերի բախում առկա է, եթե փորձագետը.

- ունի որևէ ազգակցական, ֆինանսական կամ նմանատիպ այլ կապեր տվյալ ուսումնական հաստատության կամ նրա ղեկավար կազմի հետ, որոնք թույլ չեն տա նրան կատարել անկողմնակալ, անկախ դատողություններ,
- իրականացնում է որոշակ գործառույթներ հավատարմագրման ենթակա ուսումնական հաստատությունում,
- ունի սերտ համագործակցություն տվյալ հաստատության հետ:

Գաղտնիություն. փորձագետները ստորագրում են գաղտնիությունն ապահովելու մասին պարտավորագրեր՝ երաշխավորելով, որ գնահատվող հաստատության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն գաղտնի կպահվի և կիրապարակվի բացառապես փորձագիտական զեկույցում:

Անկախություն և ազնվություն. ՈԱԱԿ-ը միջոցառումներ է ձեռնարկում՝ երաշխավորելու, որ փորձագետները չեն ենթարկվի անհարկի կողմնակի ազդեցության կամ ճնշման, ինչը կխոչընդոտի անաչառ գործելուն:

Անկողմանակալություն. փորձագետները պետք է օբյեկտիվ գործեն և չենթարկվեն որևէ ֆինանսական կամ կոմերցիոն ճնշման, ինչը կխոչընդոտի անկողմնակալ գործունեություն իրականացնելուն:

Խորհրդատվություն. ՈԱԱԿ-ը չի թույլատրում փորձագետներին տրամադրել հաստատությանը որևէ խորհրդատվություն՝ բացի փորձագիտական զեկույցում պաշտոնապես ձևակերպվածից:

VI. ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Հավատարմագրման կարգի համաձայն՝ մասնագիտական ուսումնական հաստատությունն է հոգում հավատարմագրման ողջ գործընթացի ծախսերը՝ ՄՈՒՀ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվող ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի համաձայն:

Արտաքին գնահատման (հավատարմագրման) հետ կապված ծախսերը սահմանում է ՈԱԱԿ-ը՝ կախված գործընթացի տեսակից և տևողությունից, փորձագիտական խմբի անդամների քանակից և այլ պայմաններից: Արտաքին գնահատման ծախսերը հաշվարկվում են յուրաքանչյուր գործընթացի համար առանձին: Սակագները հաստատվում են ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհրդի կողմից:

2015 թ. ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվել է բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման սակագները, իսկ 2019 թ.՝ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման սակագները: Սակագները հրապարակված են ՈԱԱԿ պաշտոնական կայքում /http://www.anqa.am/:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԵԲԿՏ	Եվրոպական բարձրագույն կրթական տարածք
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀԵԿ	Հավատարմագրման եվրոպական կոնսորցիում
ՄՈՒՀ	Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ՄԿԾ	Մասնագիտության կրթական ծրագիր
ՈԱԱԿ	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ
ՈԱԾ	Որակավորումների ազգային շրջանակ
ՈԱԵՉՈՒ	Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ